

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՎ 2015/2447 (ԵՄ) ԿԻՐԱՐԿՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2015 թվականի նոյեմբերի 24-ի

Միության մաքսային օրենսգիրքը սահմանելու մասին՝ Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 952/2013 (ԵՄ) կանոնակարգի առանձին դրույթների կիրարկման մանրամասն կանոնները սահմանելու մասին

Բաժին 2

Արտոնյալ ծագումը

Հոդված 60

Սույն բաժնի նպատակներով կիրառվում են թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 37-րդ հոդվածով սահմանված սահմանումները:

Ենթաբաժին 2

Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում շահառու երկրների պարտավորությունները

Հոդված 70

REX համակարգի շրջանակներում վարչական համագործակցության ապահովման պարտավորությունը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. ԱԸՀ սխեմայի պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով շահառու երկրները պարտավորվում են՝

ա) ստեղծել եւ պահպանել անհրաժեշտ վարչական կառուցվածքներ եւ համակարգեր, որոնք պահանջվում են այդ երկրում այն կանոնների եւ ընթացակարգերի իրականացման եւ կառավարման համար, որոնք սահմանված են սույն ենթաբաժնով եւ սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժիններով եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժիններով, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, կումուլյացիայի կիրառման համար անհրաժեշտ միջոցները.

բ) ապահովել, որ նրանց իրավասու մարմինները համագործակցեն Հանձնաժողովի հետ եւ անդամ պետությունների մաքսային մարմինների հետ:

2. 1-ին պարբերության «բ» կետում նշված համագործակցությունը բաղկացած է հետեւյալից՝

գ) անհրաժեշտ աջակցության ցուցաբերում Հանձնաժողովի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում դրա կողմից համապատասխան երկրում ԱԸՀ սխեմայի պատշաճ կառավարման նկատմամբ մոնիթորինգի իրականացման համար, ներառյալ՝ Հանձնաժողովի կամ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից տեղում ստուգումներ իրականացնելը.

դ) չհակասելով սույն կանոնակարգի 108-րդ եւ 109-րդ հոդվածներին՝ արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակի եւ սույն ենթաբաժնով, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժիններով եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժիններով սահմանված մյուս պահանջներին համապատասխանության ստուգումը, ներառյալ՝ Հանձնաժողովի կամ անդամ պետությունների մաքսային մարմինների պահանջի դեպքում ծագման քննության համատեքստում տեղում ստուգումներ իրականացնելը:

3. Գրանցված արտահանողների համակարգը կիրառելու իրավունք ունենալու համար շահառու երկրները պետք է Հանձնաժողով ներկայացնեն 1-ին

պարբերությունում նշված պարտավորությունն ստանձնելու մասին ապացույց՝ արտահանողների գրանցումն սկսելու մտադրություն ունենալու օրվանից առնվազն 3 ամիս առաջ:

4. Եթե երկիրը կամ տարածքը հանվել է Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի⁽¹³⁾ թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի II հավելվածից, ապա թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 55(8) հոդվածով եւ սույն կանոնակարգի 72-րդ, 80-րդ եւ 108-րդ հոդվածներով սահմանված՝ վարչական համագործակցություն ապահովելու պարտավորությունը շարունակում է կիրառվել այդ երկրի կամ տարածքի նկատմամբ՝ հավելվածից հանվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

Հոդված 71

**«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների եւ հաշիվ-ապրանքագրերի
հայտարարագրերի օգտագործմամբ արտահանումների նկատմամբ
կիրառվող՝ վարչական համագործակցության ընթացակարգերը եւ մեթոդները**

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Յուրաքանչյուր շահառու երկիր պետք է պահպանի կամ ապահովի հետեւյալի պահպանումը՝

- ա) Թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ ենթաբաժնով սահմանված՝ արտահանվող արտադրանքի ծագման հետ կապված կանոններ.
- բ) «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների լրացման եւ տրամադրման կանոններ.
- գ) 22-09 հավելվածում շարադրված պահանջներին համապատասխան կազմվող հաշիվ-ապրանքագրերի հայտարարագրերի օգտագործման մասին դրույթներ.

դ) սույն կանոնակարգի 73-րդ հոդվածում նշված ծանուցումների մասով պարտավորությունների վերաբերյալ դրույթներ.

ե) Օրենսգրքի 64(6) հոդվածում նշված՝ տրամադրման վերաբերյալ դրույթներ:

2. Շահառու երկրների իրավասու մարմինները համագործակցում են Հանձնաժողովի կամ անդամ պետությունների հետ, մասնավորապես՝

ա) անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելով՝ Հանձնաժողովի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում դրա կողմից համապատասխան երկրում ԱԸՀ սխեմայի պատշաճ կառավարման նկատմամբ մոնիթորինգի իրականացման համար, ներառյալ՝ Հանձնաժողովի կամ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից տեղում ստուգումներ իրականացնելը.

բ) չհակասելով սույն կանոնակարգի 73-րդ եւ 110-րդ հոդվածներին՝ արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակի եւ սույն ենթաբաժնով, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժիններով եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժիններով սահմանված մյուս պահանջներին համապատասխանության ստուգում իրականացնելով, ներառյալ՝ Հանձնաժողովի կամ անդամ պետությունների մաքսային մարմինների պահանջի դեպքում ծագման քննության համատեքստում տեղում ստուգումներ իրականացնելը.

3. Եթե շահառու երկրում նշանակված է «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների տրամադրման համար իրավասու մարմին, ստուգված են ծագման փաստաթղթային ապացույցները, եւ տրամադրված են Միություն արտահանելու համար «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները, ապա այդ շահառու երկիրը համարվում է 1-ին պարբերությունում սահմանված պայմաններն ընդունած:

4. Եթե երկիրն ընդունվել կամ վերընդունվել է որպես շահառու երկիր թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգում նշված արտադրանքի մասով, ապա այդ երկրի

ծագում ունեցող ապրանքներն օգտվում են արտոնությունների ընդհանրացված համակարգից այն պայմանով, որ դրանք շահառու երկրից արտահանվել են սույն կանոնակարգի 73(2) հոդվածում նշված օրը կամ այդ օրվանից հետո:

5. Եթե երկիրը կամ տարածքը հանվել է թիվ 978/2012 կանոնակարգի II հավելվածից, ապա թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 55-րդ հոդվածով եւ սույն կանոնակարգի 110-րդ եւ 111-րդ հոդվածներով սահմանված՝ վարչական համագործակցություն ապահովելու պարտավորությունը շարունակում է կիրառվել այդ երկրի կամ տարածքի նկատմամբ՝ հավելվածից հանվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

6. 5-րդ պարբերությունում նշված պարտավորությունները կիրառվում են Սինգապուրի նկատմամբ 2014 թվականի հունվարի 1-ից՝ 3 տարի ժամկետով:

Հոդված 72

Գրանցված արտահանողների (REX) համակարգը ներդնելու օրվանից հետո կիրառվող ծանուցման պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Շահառու երկրները ծանուցում են Հանձնաժողովին իրենց տարածքում գտնվող այն մարմինների անվանումների եւ հասցեների, ինչպես նաեւ կոնտակտային տվյալների մասին, որոնք՝

ա) տվյալ երկրի պետական կառավարման մարմինների մասն են կազմում կամ գործում են իրենց պետական կառավարման մարմինների ղեկավարության ներքո եւ իրավասու են REX համակարգում գրանցել արտահանողներին, փոփոխել եւ թարմացնել գրանցման տվյալները եւ չեղյալ հայտարարել գրանցումը.

բ) տվյալ երկրի պետական կառավարման մարմինների մասն են կազմում եւ պատասխանատու են Հանձնաժողովի եւ անդամ պետությունների մաքսային

մարմինների հետ վարչական համագործակցություն ապահովելու համար՝ սույն ենթաբաժնով, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժիններով եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժիններով նախատեսված կարգով:

2. Ծանուցումն ուղարկվում է Հանձնաժողովին ոչ ուշ, քան շահառու երկրների կողմից արտահանողների գրանցումն սկսելու մտադրություն ունենալու օրվանից 3 ամիս առաջ:

3. Շահառու երկրները Հանձնաժողովին անհապաղ տեղեկացնում են առաջին պարբերությունում նշված տեղեկատվության մասով կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 73

Մինչեւ գրանցված արտահանողների (REX) համակարգը ներդնելու օրը կիրառվող ծանուցման պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Շահառու երկրները տեղեկացնում են Հանձնաժողովին իրենց տարածքում գտնվող այն պետական կառավարման մարմինների անվանումների եւ հասցեների մասին, որոնք լիազորված են «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատներ, ինչպես նաեւ այդ մարմինների կողմից օգտագործվող կնիքների նմուշների դրոշմվածքներ տրամադրելու համար, եւ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների եւ հաշիվ-ապրանքագրերի հայտարարագրերի հսկողության համար պատասխանատու համապատասխան պետական կառավարման մարմինների անվանումների եւ հասցեների մասին:

Հանձնաժողովն այս տեղեկատվությունը կփոխանցի անդամ պետությունների մաքսային մարմիններին: Եթե այս տեղեկատվությունը տրամադրվում է նախորդող տեղեկատվությունների տրամադրման մասով

փոփոխությունների շրջանակներում, ապա Հանձնաժողովը նշում է նոր կնիքները կիրառության մեջ դրվելու ամսաթիվը՝ շահառու երկրների պետական կառավարման մարմինների կողմից տրված հրահանգներին համապատասխան: Այս տեղեկատվությունը նախատեսված է պաշտոնական օգտագործման համար, այնուամենայնիվ, երբ ապրանքները պետք է ազատ շրջանառության բաց թողնվեն, տվյալ մաքսային մարմինները կարող են թույլ տալ ներմուծողին ծանոթանալ կնիքների նմուշների դրոշմվածքներին:

Այն շահառու երկրները, որոնք արդեն տրամադրել են առաջին ենթապարբերության համաձայն պահանջվող տեղեկատվությունը, պարտավոր չեն այն կրկին տրամադրել, եթե փոփոխություններ չեն կատարվել:

2. Սույն կանոնակարգի 71(4) հոդվածի նպատակներով Հանձնաժողովն իր կայքում կիրառարակի թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգում նշված արտադրանքի մասով որպես շահառու երկիր ընդունված կամ վերընդունված երկրի կողմից սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված պարտավորությունների կատարման ամսաթիվը:

Ենթաբաժին 3

Մինչեւ գրանցված արտահանողների համակարգը կիրառելը Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում կիրառվող՝ շահառու երկրներում եւ Միությունում գործող՝ արտահանման ընթացակարգերը

Հոդված 74

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի տրամադրման ընթացակարգը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները տրամադրվում են արտահանողի կամ նրա ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա՝ ցանկացած այլ

համապատասխան օժանդակ փաստաթղթի հետ միասին, որը հաստատում է, որ արտահանման ենթակա արտադրանքը համապատասխանում է «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի տրամադրման պահանջներին: «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները տրամադրվում են 22-08 հավելվածում նշված ձեւի օգտագործմամբ:

2. Շահառու երկրների իրավասու մարմինները արտահանողին «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը տրամադրում են, երբ արտահանումն իրականացվում է կամ երաշխավորվում: Այնուամենայնիվ, շահառու երկրների իրավասու մարմինները կարող են նաեւ տրամադրել «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ այն արտադրանքի արտահանումից հետո, որին այն առնչվում է, եթե՝

- ա) ծագման սերտիֆիկատը չի տրամադրվել արտահանման ժամանակ՝ սխալների կամ չնախատեսված բացթողումների կամ հատուկ հանգամանքների պատճառով, կամ
- բ) իրավասու մարմիններին ներկայացվել են բավարար ապացույցներ առ այն, որ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը տրամադրվել է, սակայն տեխնիկական պատճառներով չի ընդունվել արտահանման ժամանակ, կամ
- գ) համապատասխան արտադրանքի վերջին նշանակման կետը որոշվել է դրա տրանսպորտային փոխադրման կամ պահման ժամանակ եւ ապրանքի խմբաքանակի հնարավոր բաժանումից հետո՝ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 43-րդ հոդվածին համապատասխան:

3. Շահառու երկրների իրավասու մարմինները կարող են նախորդող ժամանակահատվածի համար տրամադրել սերտիֆիկատ միայն հավաստիանալուց հետո, որ արտահանողի դիմումում ներկայացված՝ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը նախորդող ժամանակահատվածի համար տրամադրելու առնչությամբ ներկայացված տեղեկատվությունը համաձայնեցված է համապատասխան արտահանման փաստաթղթերում առկա տեղեկատվության հետ, եւ որ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ չի տրամադրվել, երբ տվյալ

արտադրանքն արտահանվել է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը չի ընդունվել տեխնիկական պատճառներով: ‘Issued retrospectively’ [«Տրամադրվել է հետադարձ եղանակով»], ‘Délivré a posteriori’ կամ ‘emitido a posteriori’ բառերը նշվում են նախորդող ժամանակահատվածի համար տրամադրված՝ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի 4-րդ վանդակում:

4. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի գողության, կորստի կամ ոչնչացման դեպքում արտահանողը կարող է դիմել այն իրավասու մարմիններին, որոնք տրամադրել են այն՝ կրկնօրինակն ստանալու համար, որը պետք է կազմվի նրանց տրամադրության տակ գտնվող արտահանման փաստաթղթերի հիման վրա: ‘Duplicate’ [«Պատճեն»], ‘Duplicata’ կամ ‘Duplicado’ բառերը, բնօրինակ սերտիֆիկատի տրամադրման օրը եւ սերիական համարը նշվում են «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի կրկնօրինակի 4-րդ վանդակում: Կրկնօրինակը համարվում է ուժի մեջ մտած բնօրինակ սերտիֆիկատն ուժի մեջ մտնելու օրվանից:

5. Ստուգելու համար, որ այն արտադրանքը, որի համար պահանջվում է «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ, համապատասխանում է ծագման համապատասխան կանոններին, իրավասու պետական կառավարման մարմիններն իրավունք ունեն պահանջելու ցանկացած փաստաթղթային ապացույց եւ իրականացնելու ցանկացած ստուգում, որը նրանք կհամարեն տեղին:

6. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի 2-րդ եւ 10-րդ վանդակների լրացումը պարտադիր չէ: 12-րդ վանդակում նշվում է «Միություն» բառը կամ անդամ պետություններից մեկի անվանումը: «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի տրամադրման ամսաթիվը նշվում է 11-րդ վանդակում: Այն ստորագրությունը, որը պետք է մուտքագրվի սերտիֆիկատը տրամադրող իրավասու պետական կառավարման մարմինների համար նախատեսված վանդակում, ինչպես նաեւ արտահանողի կողմից լիազորված ստորագրողի ստորագրությունը, որը պետք է մուտքագրվի 12-րդ վանդակում, պետք է լինեն ձեռագիր:

Հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի կազմման պայմանները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը կարող է կազմվել ցանկացած արտահանողի կողմից, որը գործունեություն է ծավալում շահառու երկրում, ծագում ունեցող այն արտադրանքը պարունակող մեկ կամ ավելի փաթեթից բաղկացած ցանկացած խմբաքանակի համար, որի ընդհանուր արժեքը չի գերազանցում 6 000 եվրոն, կամ պայմանով, որ սույն կանոնակարգի 67(2) հոդվածում նշված վարչական համագործակցությունը կիրառվում է սույն ընթացակարգի նկատմամբ:

2. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը կազմող արտահանողը պետք է պատրաստ լինի արտահանող երկրի մաքսային կամ այլ իրավասու պետական կառավարման մարմինների պահանջով ցանկացած ժամանակ ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հաստատում են համապատասխան արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակը:

3. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը պետք է արտահանողի կողմից կազմվի ֆրանսերենով, անգլերենով կամ իսպաներենով՝ հաշիվ-ապրանքագրի, բեռնագրի կամ ցանկացած այլ առեւտրային փաստաթղթի, այն հայտարարագրի վրա մեքենագրության, դրոշմելու կամ տպագրելու եղանակով, որի տեքստը ներառված է 22-09 հավելվածում: Եթե հայտարարագիրը ձեռագիր է, այն պետք է լրացվի թանաքով, տպատառերով: Հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերը պետք է պարունակեն արտահանողի բնօրինակ ձեռագիր ստորագրությունը:

4. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի օգտագործումը կատարվում է հետևյալ պայմաններով՝

ա) յուրաքանչյուր խմբաքանակի համար կազմվում է հաշիվ-ապրանքագրի մեկ հայտարարագիր.

- բ) եթե խմբաքանակում պարունակվող ապրանքներն արդեն ենթարկվել են ստուգման արտահանող երկրում՝ հղում կատարելով «ծագում ունեցող արտադրանքի» սահմանմանը, ապա արտահանողը կարող է հղում կատարել այդ ստուգմանը հաշիվ-ապրանքագրի հայտարարագրում:

Հոդված 76

Կումուլյացիայի դեպքում «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի տրամադրման պայմանները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 53-րդ, 54-րդ, 55-րդ կամ 56-րդ հոդվածին համապատասխան կումուլյացիայի կիրառման ժամանակ շահառու երկրի իրավասու պետական կառավարման մարմինները, որոնք պետք է տրամադրեն «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ այն արտադրանքի համար, որի համար օգտագործվել են այն կողմի ծագում ունեցող նյութեր, որում թույլատրված է կումուլյացիա, պետք է հիմնվեն հետեւյալի վրա՝

- ա) երկկողմ կումուլյացիայի դեպքում՝ արտահանողի մատակարարի կողմից տրված եւ սույն կանոնակարգի 77-րդ հոդվածի դրույթների համաձայն տրամադրված՝ ծագման ապացույց.
- բ) Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի հետ կումուլյացիայի դեպքում՝ արտահանողի մատակարարի կողմից տրված եւ Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի՝ ծագման վերաբերյալ համապատասխան կանոնների համաձայն տրամադրված՝ ծագման ապացույց՝ համապատասխան դեպքերում.
- գ) տարածաշրջանային կումուլյացիայի դեպքում՝ արտահանողի մատակարարի կողմից տրված ծագման ապացույց, մասնավորապես՝ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ, որը տրվել է 22-08 հավելվածում նշված ձեւի օգտագործմամբ

կամ, համապատասխան դեպքերում, հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր, որի տեքստը պարունակվում է 22-09 հավելվածում.

դ) ընդլայնված կումուլյացիայի դեպքում՝ արտահանողի մատակարարի կողմից տրված եւ Միության եւ համապատասխան երկրի միջեւ ազատ առեւտրի մասին համաձայնագրի դրույթների համաձայն տրամադրված՝ ծագման ապացույց:

Առաջին ենթակետի «ա», «բ», «գ» եւ «դ» կետերում նշված դեպքերում «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի 4-րդ վանդակը պետք է, համապատասխան դեպքերում, պարունակի հետեւյալ նշումը՝

- ‘EU cumulation’, ‘Norway cumulation’, ‘Switzerland cumulation’, ‘Turkey cumulation’, ‘regional cumulation’, ‘extended cumulation with country x’ [«ԵՄ կումուլյացիա», «Ներվեգիայի կումուլյացիա», «Շվեյցարիայի կումուլյացիա», «Թուրքիայի կումուլյացիա», «տարածաշրջանային կումուլյացիա», «երկարացված կումուլյացիա x երկրի հետ»], կամ
- ‘Cumul UE’, ‘Cumul Norvège’, ‘Cumul Suisse’, ‘Cumul Turquie’, ‘cumul régional’, ‘cumul étendu avec le pays x’, կամ
- ‘Acumulación UE’, ‘Acumulación Noruega’, ‘Acumulación Suiza’, ‘Acumulación Turquía’, ‘Acumulación regional’, ‘Acumulación ampliada con el país x’:

Հոդված 77

Երկկողմ կումուլյացիայի եւ հաստատված արտահանողի համար Միության արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակի ապացույցը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Միության արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակի ապացույցը տրամադրվում է հետեւյալ միջոցներից մեկով՝

- ա) EUR.1 տեղափոխման սերտիֆիկատի պատրաստում, որը տրամադրվել է 22-10 հավելվածում նշված ձեւի օգտագործմամբ, կամ
- բ) հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի պատրաստում, որի տեքստը նշված է թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 22-09 հավելվածում: Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր կարող է կազմվել 6 000 եվրոն չգերազանցող ընդհանուր արժեք ունեցող՝ ծագում ունեցող արտադրանք պարունակող խմբաքանակների համար՝ ցանկացած արտահանողի կողմից կամ Միության հաստատված արտահանողի կողմից:

2. Արտահանողը կամ նրա ներկայացուցիչը մուտքագրում է ‘GSP beneficiary countries’ եւ ‘EU’ [«ԱԸՀ շահառու երկրներ» եւ «ԵՄ»], կամ ‘Pays bénéficiaires du SPG’ եւ ‘UE’ բառերը EUR.1 տեղափոխման սերտիֆիկատի 2-րդ վանդակում:

3. Սույն ենթաբաժնի, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժինների եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժինների դրույթները՝ կապված «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի տրամադրման, օգտագործման եւ հետագա ստուգման հետ, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) կիրառվում են EUR.1 տեղափոխման սերտիֆիկատների նկատմամբ եւ, բացառությամբ դրանց տրամադրման հետ կապված դրույթների, հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերի նկատմամբ:

4. Անդամ պետությունների մաքսային մարմինները կարող են թույլատրել Միության մաքսային տարածքում հիմնադրված ցանկացած արտահանողի, այսուհետ՝ հաստատված արտահանող, որը երկկողմ կումուլացիայի շրջանակներում իրականացնում է Միության ծագում ունեցող արտադրանքի հաճախակի փոխադրումներ՝ հաշիվ-ապրանքագրերի հայտարարագրեր կազմելու համար՝ անկախ համապատասխան արտադրանքի արժեքից, եթե այդ

արտահանողը մաքսային մարմինների պահանջներին համապատասխան առաջարկում է հետեւյալը ստուգելու համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները՝

ա) արտադրանքի՝ ծագում ունենալու կարգավիճակը.

բ) այդ անդամ պետությունում կիրառվող այլ պահանջների կատարումը:

5. Մաքսային մարմինները կարող են տրամադրել հաստատված արտահանողի կարգավիճակ ցանկացած պայմաններով, որոնք նրանք համարում են տեղին: Մաքսային մարմինները հաստատված արտահանողին տրամադրում են մաքսային թույլտվության հերթական համար, որը նշվում է հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի վրա:

6. Մաքսային մարմինները հսկում են հաստատված արտահանողի կողմից թույլտվության օգտագործումը: Մաքսային մարմինները կարող են չեղարկել թույլտվությունը ցանկացած ժամանակ:

Թույլտվությունը չեղարկվում է հետեւյալ դեպքերից ցանկացածի պարագայում՝

ա) հաստատված արտահանողն այլեւս չի առաջարկում 4-րդ կետում նշված երաշխիքները.

բ) հաստատված արտահանողը չի կատարում 5-րդ կետում նշված պայմանները.

գ) հաստատված արտահանողն այլ կերպ սխալ ձեւով է օգտագործում թույլտվությունը:

7. Հաստատված արտահանողից չի պահանջվում ստորագրել հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերը, եթե հաստատված արտահանողը մաքսային մարմինների առջեւ գրավոր պարտավորություն է ստանձնում՝ ամբողջական պատասխանատվություն վերցնելով ցանկացած հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի նկատմամբ, որը նրան նույնականացնում է, ինչպես կլիներ, եթե հաստատված արտահանողը ստորագրեր այն իր ձեռագիր ստորագրությամբ:

Ենթաբաժին 4

**Գրանցված արտահանողների համակարգը կիրառելու օրվանից Միության
ԱԸՀ սխեմայի շրջանակներում կիրառվող՝ շահառու երկրներում եւ
Միությունում արտահանման ընթացակարգերը**

Հոդված 78

Արտահանողների՝ գրանցվելու պարտավորությունը եւ դրանից հրաժարվելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. ԱԸՀ սխեման կիրառվում է հետեւյալ դեպքերում.
 - ա) սույն ենթաբաժնի, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժինների եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժինների պահանջները գրանցված արտահանողի կողմից արտահանվող ապրանքների կողմից բավարարելու դեպքերում.
 - բ) ցանկացած արտահանողի կողմից արտահանված՝ ծագում ունեցող արտադրանք պարունակող մեկ կամ ավելի փաթեթներով ցանկացած խմբաքանակի դեպքում, եթե խմբաքանակում ծագում ունեցող արտադրանքի ընդհանուր արժեքը չի գերազանցում 6 000 եվրոն:
2. Խմբաքանակում ծագում ունեցող արտադրանքի արժեքը մեկ խմբաքանակում ծագում ունեցող ամբողջ արտադրանքի արժեքն է՝ հաշվի առնելով արտահանման երկրում կազմված՝ ծագման մասին հայտարարությունը:

Հոդված 79

Շահառու երկրներում գրանցման ընթացակարգը եւ արտահանման հետ կապված ընթացակարգերը, որոնք կիրառվում են գրանցված արտահանողների համակարգի կիրառման նկատմամբ՝ անցումային շրջանում (Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Շահառու երկրներն սկսում են արտահանողների գրանցումը 2017 թվականի հունվարի 1-ից:

Այնուամենայնիվ, եթե շահառու երկիրը չի կարող սկսել գրանցումն այդ օրը, ապա այն պետք է մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը գրավոր ծանուցի Հանձնաժողովին այն մասին, որ արտահանողների գրանցումն այն հետաձգում է մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը կամ 2019 թվականի հունվարի 1-ը:

2. Շահառու երկրի կողմից արտահանողների գրանցումն սկսելու օրվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում, այդ շահառու երկրի իրավասու մարմինները շարունակում են տրամադրել «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատներ այն արտահանողների պահանջով, որոնք դեռ գրանցված չեն սերտիֆիկատի տրամադրումը պահանջելու պահին:

Չհակասելով սույն կանոնակարգի 94(2) հոդվածին՝ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները, որոնք տրամադրվել են սույն պարբերության առաջին ենթապարբերության համաձայն, ընդունելի են Միությունում որպես ծագման ապացույց, եթե դրանք տրամադրվել են մինչեւ համապատասխան արտահանողի գրանցման օրը:

Շահառու երկրի այն իրավասու մարմինները, որոնք վերը նշված 12 ամսվա ժամկետում գրանցման գործընթացն ավարտելու կապակցությամբ դժվարությունների են բախվում, կարող են պահանջ ներկայացնել Հանձնաժողովին՝ այն երկարաձգելու մասին: Այդպիսի երկարաձգումը չպետք է գերազանցի 6 ամիսը:

3. Շահառու երկրում՝ գրանցված կամ չգրանցված արտահանողները կազմում են ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի համար ծագման մասին հայտարարություններ, որոնցում դրա ընդհանուր արժեքը չի գերազանցում 6 000 եվրոն այն օրվա դրությամբ, որից սկսած շահառու երկիրը մտադիր է սկսել արտահանողների գրանցումը:

Գրանցումից հետո արտահանողները կազմում են ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի համար ծագման մասին հայտարարություններ, որոնցում դրա ընդհանուր արժեքը գերազանցում է 6 000 եվրոն, սույն կանոնակարգի 86(4) հոդվածի համաձայն դրանց գրանցումը վավեր լինելու օրվանից:

4. Բոլոր շահառու երկրները գրանցված արտահանողների համակարգը պետք է կիրառեն ամենաուշը 2020 թվականի հունիսի 30-ից:

Ենթաբաժին 5

Հոդված 80

Գրանցված արտահանողների տվյալների բազան. Իշխանության մարմինների պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Հանձնաժողովը կստեղծի ապրանքների ծագումը հավաստելու համար լիազորված՝ արտահանողների գրանցման համակարգ (REX համակարգ), եւ այն հասանելի կդարձնի մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը:

2. 22-06 հավելվածում նշված ամբողջական դիմումի ձեւն ստանալուց հետո շահառու երկրների իրավասու մարմինները եւ անդամ պետությունների մաքսային մարմինները պետք է առանց ուշացման արտահանողին կամ, անհրաժեշտության դեպքում, ապրանքներ ուղարկողին հատկացնեն գրանցված արտահանողի հերթական համար եւ REX համակարգում մուտքագրեն գրանցված

արտահանողների հերթական համարը, գրանցման տվյալները եւ սույն կանոնակարգի 86(4) հոդվածի համաձայն գրանցումը վավեր դառնալու ամսաթիվը:

Շահառու երկրի իրավասու մարմինները կամ անդամ պետության մաքսային մարմինները տեղեկացնում են արտահանողին կամ, անհրաժեշտության դեպքում, ապրանքներ ուղարկողին արտահանողին կամ ապրանքներ ուղարկողին հատկացված՝ գրանցված արտահանողների հերթական համարը եւ այն ամսաթիվը, որից սկսած գրանցումը վավեր է:

3. Եթե իրավասու մարմինները համարում են, որ դիմումում ներկայացված տեղեկատվությունն ամբողջական չէ, ապա նրանք պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնեն արտահանողին:

4. Շահառու երկրների իրավասու մարմինները եւ անդամ պետությունների մաքսային մարմինները պետք է իրենց կողմից գրանցված տվյալները մշտապես թարմացնեն: Նրանք պետք է փոփոխեն այդ տվյալները՝ գրանցված արտահանողի կողմից սույն կանոնակարգի 89-րդ հոդվածին համապատասխան տեղեկացվելուց անմիջապես հետո:

Հոդված 81

Որոշակի դրույթների կիրառման ամսաթիվը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Սույն կանոնակարգի 70-րդ, 72-րդ, 78-80-րդ, 82-93-րդ, 99-107-րդ, 108-րդ, 109-րդ եւ 112-րդ հոդվածները շահառու երկրում REX համակարգով գրանցված արտահանողների կողմից ապրանքներ արտահանելու առնչությամբ կիրառվում են այն օրվանից, երբ տվյալ շահառու երկիրն սկսում է արտահանողներին գրանցել տվյալ համակարգով: Ինչ վերաբերում է Միության

արտահանողներին, ապա սույն հոդվածները կիրառվում են 2017 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն կանոնակարգի 71-րդ, 73-րդ, 74-77-րդ, 94-98-րդ եւ 110-112-րդ հոդվածները կիրառվում են այն արտահանողների կողմից ապրանքներ արտահանելու առնչությամբ, որոնք շահառու երկրում գրանցված չեն REX համակարգով: Ինչ վերաբերում է Միության արտահանողներին, ապա սույն հոդվածները կիրառվում են մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հոդված 82

Գրանցված արտահանողների տվյալների բազան. տվյալների բազայի հասանելիության հետ կապված իրավունքները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Հանձնաժողովն ապահովում է, որ սույն հոդվածին համապատասխան տրամադրվի REX համակարգին հասանելիություն:

2. Բոլոր տվյալներին ծանոթանալու համար դրանք պետք է հասանելի լինեն Հանձնաժողովին:

3. Շահառու երկրի իրավասու մարմինների կողմից գրանցված արտահանողների մասին տվյալները պետք է հասանելի լինեն վերջիններիս՝ դրանց ծանոթանալու համար:

4. Անդամ պետությունների մաքսային մարմինների, այլ անդամ պետությունների մաքսային մարմինների, շահառու երկրների, ինչպես նաեւ Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի իրավասու մարմինների կողմից գրանցված տվյալները պետք է հասանելի լինեն անդամ պետությունների մաքսային մարմիններին՝ դրանց ծանոթանալու համար: Տվյալների այս հասանելիությունն անհրաժեշտ է Օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված կարգով մաքսային հայտարարագրերի ստուգումներ կատարելու կամ Օրենսգրքի

48-րդ հոդվածով նախատեսված կարգով բացթողումից հետո հսկողություն իրականացնելու համար:

5. Շահառու երկրների իրավասու մարմինների համար Հանձնաժողովը REX համակարգի նկատմամբ անվտանգ հասանելիություն է ապահովում:

6. Եթե որեւէ երկիր կամ տարածք հանվել է թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի II հավելվածից, ապա REX համակարգը շարունակում է հասանելի լինել դրա իրավասու մարմինների համար այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է թույլ տալու համար, որ վերջիններս կատարեն իրենց՝ սույն կանոնակարգի 70-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները:

7. 22-06 հավելվածով սահմանված ձեւի 6-րդ վանդակում ստորագրելով՝ արտահանողը համաձայնություն է տալիս, որ Հանձնաժողովը հանրամատչելի դարձնի հետեւյալ տվյալները՝

ա) գրանցված արտահանողի անվանումը.

բ) այն վայրի հասցեն, որտեղ արտահանողը հիմնադրվել է.

գ) 22-06 հավելվածով սահմանված ձեւի 2-րդ վանդակում նշված կոնտակտային տվյալները.

դ) արտոնյալ պայմանների հավակնող ապրանքների մոտավոր նկարագրությունը, այդ թվում՝ 22-06 հավելվածում սահմանված ձեւի 4-րդ վանդակում նշված՝ Ներդաշնակեցված համակարգի ապրանքային դիրքերի կամ խմբերի մոտավոր ցանկը.

ե) գրանցված արտահանողի EORI համարը կամ առեւտուր իրականացնողի նույնականացման համարը (ԱՆՀ):

6-րդ վանդակը չստորագրելը հիմք չէ արտահանողին չգրանցելու համար:

8. Հանձնաժողովը միշտ պետք է հանրամատչելի դարձնի հետեւյալ տվյալները՝

- ա) գրանցված արտահանողի հերթական համարը.
- բ) այն ամսաթիվը, որից սկսած գրանցումը վավեր է.
- գ) գրանցումը չեղյալ հայտարարելու ամսաթիվը, եթե կիրառելի է.
- դ) տեղեկատվություն այն մասին, թե արդյոք գրանցումը կիրառվում է նաեւ դեպի Նորվեգիա, Շվեյցարիա կամ Թուրքիա արտահանումների դեպքում.
- ե) REX համակարգի եւ հանրային կայքի միջեւ վերջին համաժամանակեցման ամսաթիվը:

Հոդված 83

Գրանցված արտահանողների տվյալների բազան. տվյալների պաշտպանությունը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. REX համակարգում գրանցված տվյալները մշակվում են բացառապես սույն ենթաբաժնում սահմանված կարգով ԱԸՀ սխեման կիրառելու նպատակով:

2. Գրանցված արտահանողներին տրամադրվում է Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա»-«ե» կետերով⁽¹⁴⁾ կամ Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 95/46/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը⁽¹⁵⁾: Բացի այդ, նրանց տրամադրվում է նաեւ հետեւյալ տեղեկատվությունը՝

- ա) մշակման այն գործընթացների իրավական հիմքերի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց համար տվյալները նախատեսված են.
- բ) տվյալների պահպանման ժամանակահատվածը:

Գրանցված արտահանողներին այդ տեղեկատվությունը տրամադրվում է 22-06 հավելվածում սահմանված կարգով գրանցված արտահանող դառնալու դիմումին կցված ծանուցման միջոցով:

3. Շահառու երկրի յուրաքանչյուր իրավասու մարմին եւ անդամ պետության յուրաքանչյուր մաքսային մարմին, որը տվյալներ է մուտքագրել REX համակարգ, համարվում է այդ տվյալների մշակման մասով հսկիչ:

Հանձնաժողովը համարվում է բոլոր տվյալների մշակման մասով ընդհանուր հսկիչ, որը երաշխավորում է, որ գրանցված արտահանողը ձեռք կբերի իր իրավունքները:

4. 22-06 հավելվածում նշված REX համակարգում հավաքված եւ ազգային համակարգերում մշակված տվյալների մշակման հետ կապված՝ գրանցված արտահանողների իրավունքներն իրականացվում են տվյալների պաշտպանության օրենսդրությանը համապատասխան՝ կիրառելով այն անդամ պետության թիվ 95/46/ԵՀ հրահանգը, որը հավաքում է իր տվյալները:

5. Անդամ պետությունները, որոնք իրենց ազգային համակարգերում կրկնօրինակում են REX համակարգի՝ իրենց հասանելի տվյալները, պետք է կրկնօրինակված տվյալները մշտապես թարմացնեն:

6. Գրանցված արտահանողների՝ նրանց գրանցման տվյալները Հանձնաժողովի կողմից մշակվելու մասով իրավունքներն իրականացվում են թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան:

7. Տվյալների հասանելիության, ճշտման, ջնջման կամ արգելափակման իրավունքը թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգին համապատասխան իրականացնելու՝ գրանցված արտահանողի կողմից ցանկացած պահանջ ներկայացվում է տվյալների հսկիչին եւ մշակվում վերջինիս կողմից:

Եթե գրանցված արտահանողը նման պահանջ է ներկայացրել Հանձնաժողով՝ առանց փորձելու տվյալների հսկիչից ձեռք բերել իր իրավունքները, ապա Հանձնաժողովն այդ պահանջն ուղարկում է գրանցված արտահանողի տվյալների հսկիչին:

Եթե գրանցված արտահանողը տվյալների հսկիչից ձեռք չի բերում իր իրավունքները, ապա գրանցված արտահանողը այդ պահանջը ներկայացնում է

որպես հսկիչ հանդես եկող Հանձնաժողով: Հանձնաժողովն իրավունք ունի ճշտելու, ջնջելու կամ արգելափակելու տվյալները:

8. Տվյալների պաշտպանության հարցերով ազգային վերահսկիչ մարմինները եւ Տվյալների պաշտպանության հարցերով եվրոպական վերահսկիչ մարմինը, գործելով յուրաքանչյուրն իր համապատասխան իրավասության սահմաններում, համագործակցում են եւ ապահովում գրանցման տվյալների համակարգված վերահսկողությունը:

Գործելով յուրաքանչյուրն իր համապատասխան իրավասության սահմաններում՝ վերջիններս փոխանակվում են համապատասխան տեղեկատվությամբ, աջակցում մեկը մյուսին իրականացնել աուդիտներ եւ տեսչական ստուգումներ, քննարկել սույն կանոնակարգի մեկնաբանման կամ կիրառման բարդությունները, ուսումնասիրել անկախ վերահսկողության իրականացման կամ տվյալների սուբյեկտների իրավունքների իրականացման հետ կապված խնդիրները, ներդաշնակեցված առաջարկներ կազմել ցանկացած խնդիր համատեղ լուծելու համար եւ անհրաժեշտության դեպքում խթանել տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկությունը:

Հոդված 84

Գրանցված արտահանողների (REX) համակարգի կիրարկման համար անդամ պետությունների նկատմամբ կիրառվող ծանուցման պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Անդամ պետությունները ծանուցում են Հանձնաժողովին իրենց տարածքում գտնվող այն մաքսային մարմինների անվանումների, հասցեների եւ կոնտակտային տվյալների մասին, որոնք՝

ա) իրավասու են գրանցել արտահանողներին եւ ապրանքներ ուղարկողներին REX համակարգում, փոփոխել եւ թարմացնել գրանցման տվյալները եւ չեղյալ հայտարարել գրանցումը.

բ) պատասխանատու են շահառու երկրների իրավասու մարմինների հետ վարչական համագործակցություն ապահովելու համար՝ սույն ենթաբաժնով, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժիններով եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժիններով նախատեսված կարգով:

Ծանուցումը Հանձնաժողով է ուղարկվում մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 30-ը:

Անդամ պետությունները Հանձնաժողովին անմիջապես տեղեկացնում են առաջին ենթապարբերությունում նշված տեղեկատվության մասով կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 85

Անդամ պետություններում գրանցման ընթացակարգը եւ արտահանման հետ կապված ընթացակարգերը, որոնք կիրառվում են գրանցված արտահանողների համակարգի կիրառման նկատմամբ՝ անցումային շրջանում

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. 2017 թվականի հունվարի 1-ին անդամ պետությունների մաքսային մարմիններն սկսում են իրենց տարածքներում հիմնադրված արտահանողների գրանցումը:

2. 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ բոլոր անդամ պետություններում մաքսային մարմինները դադարեցնում են EUR.1 տեղափոխման սերտիֆիկատների տրամադրումը թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 53-րդ հոդվածին համապատասխան կումուլյացիայի նպատակով:

3. Մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետությունների մաքսային մարմինները տրամադրում են EUR.1 տեղափոխման սերտիֆիկատներ կամ «Ա» ձեւի ծագման փոխարինող սերտիֆիկատներ՝ դեռեւս չգրանցված

արտահանողների կամ ապրանքներ ուղարկողների պահանջով: Սա նաեւ կիրառվում է, եթե Միություն ուղարկված ծագում ունեցող արտադրանքն ուղեկցվում է շահառու երկրում գրանցված արտահանողի կողմից ծագման մասին հայտարարություններով:

4. Միությունում՝ գրանցված կամ չգրանցված արտահանողները 2017 թվականի հունվարի 1-ից կազմում են ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի համար ծագման մասին հայտարարություններ, որոնցում դրա ընդհանուր արժեքը չի գերազանցում 6 000 եվրոն:

Գրանցումից հետո արտահանողները կազմում են ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի համար ծագման մասին հայտարարություններ, որոնցում դրա ընդհանուր արժեքը սույն կանոնակարգի 86(4) հոդվածի համաձայն դրանց գրանցումը վավեր լինելու օրվա դրությամբ գերազանցում է 6 000 եվրոն:

5. Ապրանքներ ուղարկողները, որոնք գրանցվել են, կարող են կազմել ծագման մասին փոխարինող հայտարարություններ այն ամսաթվից սկսած, երբ սույն կանոնակարգի 86(4) հոդվածի համաձայն դրանց գրանցումը վավեր է: Սա կիրառվում է անկախ նրանից, թե ապրանքներն ուղեկցվում են շահառու երկրում տրամադրված «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատով կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրով կամ արտահանողի կողմից կազմված՝ ծագման մասին հայտարարությունով:

Հոդված 86

Գրանցված արտահանող դառնալու համար դիմումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Գրանցված արտահանող դառնալու համար արտահանողը դիմում է ներկայացնում այն շահառու երկրի իրավասու մարմիններ, որտեղ գտնվում է իր կենտրոնական գրասենյակը, կամ որտեղ նա մշտապես գտնվում է:

Դիմումը կազմվում է 22-06 հավելվածում նշված ձեւի օգտագործմամբ:

2. Գրանցված արտահանող դառնալու համար արտահանողը կամ Միության մաքսային տարածքում հիմնադրված՝ ապրանքներ ուղարկողը դիմում է ներկայացնում համապատասխան անդամ պետությունների իրավասու մարմիններ: Դիմումը կազմվում է 22-06 հավելվածում նշված ձեւի օգտագործմամբ:

3. ԱԸՀ-ի համաձայն արտահանման նպատակներով եւ արտոնությունների ընդհանրացված սխեմաների շրջանակներում Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի արտահանողներից միայն պահանջվում է գրանցվել մեկ անգամ:

Շահառու երկրների իրավասու մարմինների կողմից արտահանողին հատկացվում է գրանցված արտահանողի հերթական համար՝ Միության, Նորվեգիայի եւ Շվեյցարիայի, ինչպես նաեւ Թուրքիայի ԱԸՀ սխեմաների շրջանակներում արտահանման նպատակով՝ այն դեպքում, երբ այդ երկրները ճանաչել են այն երկիրը, որտեղ կատարվել է գրանցումը, որպես շահառու երկիր:

4. Գրանցումը վավեր է այն օրվանից, երբ շահառու երկրների իրավասու մարմինները կամ անդամ պետության մաքսային մարմիններն ստանում են գրանցման ամբողջական դիմումը՝ 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն:

5. Եթե արտահանողը ներկայացված է արտահանման ձեականությունների իրականացման նպատակով, եւ արտահանողի ներկայացուցիչը նաեւ գրանցված արտահանող է, ապա այս ներկայացուցիչը չպետք է օգտագործի իր սեփական՝ գրանցված արտահանողի համարը:

Հոդված 87

Գրանցված արտահանողների տվյալների բազան.

Հրապարակայնության ապահովման միջոցները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Սույն կանոնակարգի 70(4) հոդվածի նպատակներով՝ Հանձնաժողովը կիրապարակի իր կայքում այն ամսաթիվը, երբ շահառու երկրները սկսում են կիրառել գրանցված արտահանողների համակարգը: Հանձնաժողովը մշտապես կթարմացնի տեղեկատվությունը:

Հոդված 88

Միության ԱԸՀ սխեմայի շահառու երկիր դարձող երկրի համար

արտահանողների ավտոմատ գրանցումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Եթե երկիրն ավելացվել է թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի II հավելվածում շահառու երկրների ցուցակում, Հանձնաժողովն ավտոմատ կերպով ակտիվացնում է իր ԱԸՀ սխեմայի համար բոլոր՝ այդ երկրում գրանցված արտահանողների գրանցումներն այն պայմանով, որ գրանցման տվյալները հասանելի են REX համակարգում եւ վավեր են առնվազն Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի ԱԸՀ սխեմաների համար:

Այս դեպքում այն արտահանողը, որն արդեն գրանցվել է Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի ԱԸՀ սխեմաներից առնվազն մեկում, կարող է իր իրավասու մարմիններ Միության ԱԸՀ սխեմայում գրանցվելու դիմում չներկայացնել:

Գրանցված արտահանողների գրանցամատյանից հանելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Գրանցված արտահանողները շահառու երկրի իրավասու մարմիններին կամ անդամ պետությունների մաքսային մարմիններին անմիջապես տեղեկացնում են այն տեղեկատվության մեջ կատարված փոփոխությունների մասին, որը նրանք տրամադրել են իրենց գրանցելու նպատակով:

2. Գրանցված արտահանողները, որոնք այլեւ չեն բավարարում ԱԸՀ սխեմայով ապրանքներ արտահանելու պայմանները կամ այլեւ ԱԸՀ սխեմայով ապրանքներ արտահանելու մտադրություն չունեն, տեղեկացնում են համապատասխանաբար շահառու երկրի իրավասու մարմիններին կամ անդամ պետության մաքսային մարմիններին:

3. Շահառու երկրի իրավասու մարմինները կամ անդամ պետության մաքսային մարմինները չեղյալ են հայտարարում գրանցումը, եթե գրանցված արտահանողը՝

- ա) այլեւ գոյություն չունի.
- բ) այլեւ չի բավարարում ԱԸՀ սխեմայով ապրանքներ արտահանելու պայմաններին.
- գ) շահառու երկրի իրավասու մարմին կամ անդամ պետության մաքսային մարմիններին տեղեկացրել է, որ ինքն այլեւ ԱԸՀ սխեմայով ապրանքներ արտահանելու մտադրություն չունի.
- դ) դիտավորությամբ կամ անփութությամբ կազմում է ծագման մասին այնպիսի հայտարարություն, որը պարունակում է սխալ տեղեկատվություն եւ սխալմամբ հանգեցնում է արտոնյալ սակագնային պայմաններից օգտվելուն կամ այն կազմելու պատճառ է դառնում:

4. Շահառու երկրի իրավասու մարմինը կամ անդամ պետության մաքսային մարմինները կարող են չեղյալ հայտարարել գրանցումը, եթե գրանցված արտահանողն իր գրանցման վերաբերյալ տվյալները չի թարմացնում:

5. Գրանցումները չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ապագայի համար, այն է՝ չեղյալ հայտարարելու օրվանից հետո կազմված՝ ծագման մասին հայտարարությունների մասով: Գրանցումը չեղյալ հայտարարելը ոչ մի կերպ չի ազդում այն ծագման մասին հայտարարությունների վավերականության վրա, որոնք կազմվել են նախքան չեղյալ հայտարարելու մասին գրանցված արտահանողին տեղեկացնելը:

6. Շահառու երկրի իրավասու մարմինը կամ անդամ պետության մաքսային մարմինները գրանցված արտահանողին տեղեկացնում են իր գրանցումը չեղյալ հայտարարելու եւ այն ամսաթվի մասին, որից հետո չեղյալ հայտարարելը ուժի մեջ է մտնելու:

7. Իր գրանցումը չեղյալ հայտարարելու դեպքում ապրանքներն արտահանողի կամ ուղարկողի համար պետք է հասանելի լինեն իրավական պաշտպանության միջոցներ:

8. Գրանցված արտահանողին չեղյալ հայտարարելը չեղարկվում է նրան սխալ չեղյալ հայտարարելու դեպքում: Ապրանքներն արտահանողը կամ ուղարկողն իրավունք ունի օգտագործելու գրանցման ժամանակ իրեն տրամադրված՝ գրանցված արտահանողի հերթական համարը:

9. Ապրանքներն արտահանողները կամ ուղարկողները, որոնց գրանցումը չեղյալ է հայտարարվել, սույն կանոնակարգի 86-րդ հոդվածին համապատասխան կարող են գրանցված արտահանող դառնալու նոր դիմում ներկայացնել: Ապրանքներն արտահանողները կամ ուղարկողները, որոնց գրանցումը 3(դ) եւ 4-րդ պարբերություններին համապատասխան չեղյալ է հայտարարվել, կարող են կրկին գրանցվել միայն, եթե իրենց գրանցած՝ շահառու երկրի իրավասու մարմիններին կամ անդամ պետության մաքսային մարմիններին ապացուցեն, որ

իրենք շտկել են այն իրավիճակը, որը հանգեցրել էր իրենց գրանցումը չեղյալ հայտարարելուն:

10. Չեղյալ հայտարարված գրանցմանն առնչվող տվյալները REX համակարգում շահառու երկրի այն իրավասու մարմնի կամ անդամ պետության այն մաքսային մարմինների կողմից, որոնք դրանք համակարգ են մուտքագրել, պահվում են չեղյալ հայտարարելու օրացուցային տարվանից հետո առավելագույնը 10 օրացուցային տարի: Այդ 10 օրացուցային տարիներից հետո շահառու երկրի իրավասու մարմինը կամ անդամ պետության մաքսային մարմինները ոչնչացնում են տվյալները:

Հոդված 90

Գրանցված արտահանողների գրանցամատյանից ավտոմատ կերպով հանումը, եթե երկիրը հանվել է շահառու երկրների ցանկից

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Հանձնաժողովը չեղյալ է հայտարարում շահառու երկրում գրանցված բոլոր արտահանողների գրանցումները, եթե շահառու երկիրը հանվել է թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգի II հավելվածի՝ շահառու երկրների ցանկից, կամ եթե շահառու երկրին տրված սակագնային առանձնաշնորհումները ժամանակավորապես դադարեցվել են՝ թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգին համապատասխան:

2. Եթե այդ երկիրը կրկին ընդգրկվել է այդ ցանկում, կամ եթե շահառու երկրին տրված սակագնային առանձնաշնորհումների ժամանակավոր դադարեցումն ավարտվել է, Հանձնաժողովը վերաակտիվացնում է այդ երկրում գրանցված բոլոր արտահանողների գրանցումները՝ պայմանով, որ արտահանողների գրանցման տվյալները հասանելի են համակարգում եւ դեռեւս վավեր են առնվազն Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի ԱԸՀ

սխեմաների համար: Հակառակ դեպքում արտահանողները կրկին գրանցվում են սույն կանոնակարգի 86-րդ հոդվածին համապատասխան:

3. Շահառու երկրում գրանցված բոլոր արտահանողների գրանցումներն առաջին պարբերությանը համապատասխան չեղյալ հայտարարելու դեպքում չեղյալ հայտարարված գրանցումների տվյալները REX համակարգում պահվում են չեղյալ հայտարարելու օրացուցային տարվանից հետո առնվազն 10 օրացուցային տարի: Այդ 10-ամյա ժամանակահատվածից հետո եւ եթե շահառու երկիրը ավելի, քան 10 տարի Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի ԱԸՀ սխեմայի շահառու երկիր չի եղել, Հանձնաժողովը չեղյալ հայտարարված գրանցումների տվյալները ոչնչացնում է REX համակարգից:

Հոդված 91

Արտահանողների պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Արտահանողներն ու գրանցված արտահանողները պետք է կատարեն հետեւյալ պարտավորությունները՝

- ա) նրանք պետք է պատշաճ կոմերցիոն հաշվապահական հաշվառում վարեն արտոնյալ պայմանների հավակնող ապրանքների արտադրության եւ մատակարարման վերաբերյալ.
- բ) նրանք պետք է հասանելի պահեն արդյունաբերության մեջ օգտագործվող նյութերին առնչվող բոլոր ապացույցները.
- գ) նրանք պետք է պահեն արդյունաբերության մեջ օգտագործվող նյութերին առնչվող բոլոր մաքսային փաստաթղթերը.
- դ) նրանք պետք է ծագման մասին հայտարարություն կազմելու օրացուցային տարվանից հետո առնվազն 3 տարի կամ, եթե ազգային օրենքով

պահանջվում է, ավելի երկար ժամկետով պահեն հետեւյալի վերաբերյալ գրառումները՝

- i) իրենց կողմից կազմված ծագման մասին հայտարարություններ.
- ii) իրենց՝ ծագում ունեցող եւ ծագում չունեցող նյութերը, արտադրությունը եւ բաժնետիրական հաշիվները:

Այդ գրառումներն ու ծագման մասին այդ հայտարարությունները կարող են պահվել էլեկտրոնային ձեւաչափով, սակայն պետք է թույլ տան, որ արտահանվող արտադրանքի արդյունաբերության մեջ օգտագործված նյութերը լինել հետագծելի, իսկ նրանց ծագման կարգավիճակը՝ հաստատված:

2. 1-ին պարբերությամբ նախատեսված պարտավորությունները կիրառվում են նաեւ այն մատակարարների նկատմամբ, որոնք արտահանողներին մատակարարների հայտարարագրեր են տրամադրում՝ հավաստելով իրենց կողմից մատակարարվող ապրանքների ծագման կարգավիճակը:

3. Այն ապրանքներ ուղարկողները, անկախ այն հանգամանքից՝ գրանցված են, թե ոչ, որոնք ծագման մասին փոխարինող հայտարարություններ են կազմում, պահում են իրենց փոխարինած՝ ծագման մասին նախնական հայտարարությունները ծագման մասին փոխարինող հայտարարություն կազմելու օրացուցային տարվանից հետո առնվազն 3 տարի կամ ավելի երկար ժամկետով, եթե ազգային օրենքով պահանջվում է:

Հոդված 92

Ծագման մասին հայտարարության վերաբերյալ ընդհանուր դրույթներ

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Ծագման մասին հայտարարությունը կարող է կազմվել Միություն արտահանվելու ժամանակ կամ այն ժամանակ, երբ երաշխավորվում է Միություն արտահանելը:

Եթե համապատասխան արտադրանքը համարվում է որպես արտահանման շահառու երկրի կամ այլ շահառու երկրի ծագում ունեցող արտադրանք՝ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 55(4) հոդվածի երկրորդ ենթակետի կամ նույն կանոնակարգի 55(6) հոդվածի երկրորդ ենթակետի համաձայն, ապա ծագման մասին հայտարարությունն արտահանողի կողմից կազմվում է արտահանման շահառու երկրում:

Եթե համապատասխան արտադրանքն արտահանվում է առանց հետագա մշակման կամ վերամշակման կամ միայն թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 47(1)(ա) հոդվածում նկարագրված գործողությունների ենթարկվելուց հետո եւ, այդպիսով, պահպանում է իր ծագումը նույն կանոնակարգի 55(4) հոդվածի երրորդ ենթակետի եւ 55(6) հոդվածի երրորդ ենթակետի համաձայն, ապա ծագման մասին հայտարարությունն արտահանողի կողմից կազմվում է ծագման շահառու երկրում:

2. Ծագման մասին հայտարարությունը կարող է կազմվել նաեւ համապատասխան արտադրանքի արտահանումից (հետադարձ ուժով հայտարարություն) հետո: Ծագման մասին հետադարձ ուժով այդ հայտարարությունն ընդունելի է, եթե այն ներկայացվել է այն անդամ պետությունում մաքսային մարմիններին, որտեղ ներկայացվել է ազատ շրջանառության բաց թողնելու համար մաքսային հայտարարագիրը՝ ներմուծումից ամենաուշը 2 տարի հետո:

Եթե խմբաքանակի բաժանումը կատարվում է թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 43-րդ հոդվածի համաձայն եւ այն պայմանով, որ առաջին ենթապարբերությունում նշված 2 տարվա ժամկետը պահպանվում է, ապա ծագման մասին հայտարարությունը կարող է կազմվել հետադարձ գործողությամբ՝ արտադրանքի արտահանման երկրի արտահանողի կողմից: Սա կիրառվում է *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), եթե խմբաքանակի բաժանումը կատարվում է մեկ այլ շահառու երկրում կամ Նորվեգիայում, Շվեյցարիայում կամ Թուրքիայում:

3. Ծագման մասին հայտարարությունը տրամադրվում է արտահանողի կողմից Միությունում իր հաճախորդին եւ պարունակում է 22-07 հավելվածում նշված մանրամասներ: Այն կազմվում է անգլերենով, ֆրանսերենով կամ իսպաներենով:

Այն կարող է կազմվել ցանկացած կոմերցիոն փաստաթղթում, որը թույլ է տալիս համապատասխան արտահանողի եւ ներառված ապրանքների նույնականացում:

4. 1-3-րդ պարբերությունները *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) կիրառվում են երկկողմ կոմուլյացիայի նպատակներով Միությունում կազմված ծագման մասին հայտարարությունների նկատմամբ:

Հոդված 93

Կոմուլյացիայի դեպքում ծագման մասին հայտարարությունը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Երկկողմ կամ տարածաշրջանային կոմուլյացիայի շրջանակներում օգտագործվող նյութերի ծագումը հաստատելու նպատակով այն երկրի ծագում ունեցող նյութերի օգտագործմամբ արտադրված արտադրանք արտահանողը, որտեղ թույլատրված է կոմուլյացիա, հիմք է ընդունում այդ նյութերի մատակարարի կողմից տրամադրված՝ ծագման մասին հայտարարությունը: Այդ դեպքերում արտահանողի կողմից կազմված ծագման մասին հայտարարությունը համապատասխան դեպքերում պարունակում է հետեւյալ նշումը՝ ‘EU cumulation’, ‘regional cumulation’ [«ԵՄ կոմուլյացիա», «տարածաշրջանային կոմուլյացիա»], ‘Cumul UE’, ‘Cumul regional’ կամ ‘Acumulación UE’, ‘Acumulación regional’:

2. Թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 54-րդ հոդվածին համապատասխան կոմուլյացիայի շրջանակներում օգտագործվող նյութերի ծագումը հաստատելու նպատակներով Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ

Թուրքիայի ծագում ունեցող նյութերի օգտագործմամբ արտադրված արտադրանք արտահանողը հիմք է ընդունում այդ նյութերի մատակարարի կողմից տրամադրված ծագման մասին ապացույցն այն պայմանով, որ այդ ապացույցը տրամադրվել է Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի՝ ծագման ԱԸՀ կանոնների դրույթների համաձայն: Այդ դեպքում արտահանողի կողմից կազմված՝ ծագման մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ նշումը՝ ‘Norway cumulation’, ‘Switzerland cumulation’, ‘Turkey cumulation’ [«Ներվեգիայի կումուլյացիա», «Շվեյցարիայի կումուլյացիա», «Թուրքիայի կումուլյացիա»], ‘Cumul Norvège’, ‘Cumul Suisse’, ‘Cumul Turquie’ կամ ‘Acumulación Noruega’, ‘Acumulación Suiza’, ‘Acumulación Turquía’:

3. Թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 56-րդ հոդվածին համապատասխան ընդլայնված կումուլյացիայի շրջանակներում օգտագործվող նյութերի ծագումը հաստատելու նպատակներով այն կողմի ծագում ունեցող նյութերի օգտագործմամբ արտադրված արտադրանք արտահանողը, որտեղ թույլատրված է ընդլայնված կումուլյացիա, հիմք է ընդունում այդ նյութերի մատակարարի կողմից տրամադրված ծագման մասին ապացույցն այն պայմանով, որ այդ ապացույցը տրամադրվել է Միության եւ համապատասխան կողմի միջեւ համապատասխան ազատ առեւտրի համաձայնագրի դրույթների համաձայն:

Այդ դեպքում արտահանողի կողմից կազմված՝ ծագման մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ նշումը՝ ‘extended cumulation with country x’ [«Երկարացված կումուլյացիա x երկրի հետ»], ‘cumul étendu avec le pays x’ կամ ‘Acumulación ampliada con el país x’:

Ենթաբաժին 6

Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում մինչև գրանցված արտահանողների համակարգը կիրառելու օրը կիրառվող՝ Միությունում ազատ շրջանառության համար բաց թողնման ընթացակարգերը

Հոդված 94

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատներ կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրեր ներկայացնելն ու դրանց վավերականությունը եւ դրանք ուշացումով ներկայացնելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերը ներկայացվում են ներմուծող անդամ պետությունների մաքսային մարմիններ՝ մաքսային հայտարարագրին առնչվող ընթացակարգերին համապատասխան:

2. Ծագման ապացույցը վավեր է արտահանող երկրում տրամադրվելու օրվանից հետո՝ 10 ամսվա ընթացքում, եւ տվյալ ժամանակահատվածում պետք է ներկայացվի ներմուծող երկրի մաքսային մարմիններ:

Դրանց վավերականության ժամկետը լրանալուց հետո ներմուծող երկրի մաքսային մարմիններ ներկայացված ծագման ապացույցները կարող են ընդունվել սակագնային առանձնաշնորհումներ կիրառելու նպատակով, եթե մինչև սահմանված վերջնաժամկետն այս փաստաթղթերը չներկայացնելը պայմանավորված է բացառիկ հանգամանքներով:

Ուշացումով ներկայացնելու մյուս բոլոր դեպքերում ներմուծող երկրի մաքսային մարմինները կարող են ընդունել ծագման ապացույցները, եթե արտադրանքը մաքսային մարմիններ ներկայացվել է նախքան տվյալ վերջնաժամկետը:

**«Ա» ձեռի ծագման սերտիֆիկատների եւ հաշիվ-ապրանքագրի
հայտարարագրերի փոխարինումը**

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Եթե ծագում ունեցող ապրանքները, որոնք դեռեւս ազատ շրջանառության համար բաց չեն թողնվել, գտնվում են անդամ պետության մաքսատան հսկողության տակ, ապա ապրանքներ ուղարկողի կողմից ներկայացված գրավոր պահանջի հիման վրա մաքսատունը փոխարինում է «Ա» ձեռի ծագման նախնական սերտիֆիկատը կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը մեկ կամ ավելի «Ա» ձեռի ծագման սերտիֆիկատներով (փոխարինող սերտիֆիկատ) ամբողջ կամ որոշակի արտադրանքը Միության շրջանակներում այլ վայր կամ Նորվեգիա կամ Շվեյցարիա ուղարկելու նպատակներով: Ապրանքներ ուղարկողն իր պահանջում նշում է, թե արդյոք ծագման նախնական ապացույցի պատճենը պետք է կցվի փոխարինող սերտիֆիկատին:

2. Փոխարինող սերտիֆիկատը կազմվում է 22-19 հավելվածին համապատասխան:

Մաքսատունը ստուգում է փոխարինող սերտիֆիկատի՝ ծագման նախնական ապացույցին համապատասխանությունը:

3. Եթե փոխարինող սերտիֆիկատի վերաբերյալ պահանջը ներկայացվում է բարեխղճորեն գործող՝ ապրանքներ ուղարկողի կողմից, ապա նա պատասխանատվություն չի կրում ծագման նախնական ապացույցի մեջ մուտքագրված մանրամասն տվյալների ճշգրտության համար:

4. Մաքսատունը, որին ներկայացվել է փոխարինող սերտիֆիկատ տրամադրելու պահանջ, պետք է ծագման նախնական ապացույցի մեջ կամ դրա հավելվածի մեջ նշի ուղարկված արտադրանքի քաշը, քանակը, բնույթը կամ նպատակակետ երկիրը եւ նշի փոխարինման համապատասխան սերտիֆիկատի

կամ սերտիֆիկատների սերիական համարները: Այն պահպանում է ծագման նախնական ապացույցն առնվազն 3 տարի:

5. Օրենսգրքի 64(6) հոդվածի համաձայն տրամադրված շեղումներին համապատասխան սակագնային առանձնաշնորհումներից օգտվող արտադրանքի դեպքում սույն հոդվածում սահմանված ընթացակարգը կիրառվում է միայն այն դեպքերում, երբ այդ արտադրանքը նախատեսված է Միության համար:

Հոդված 96

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերի օգտագործմամբ մասնաբաժիններով ներմուծումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Եթե ներմուծողի պահանջով եւ անդամ պետության մաքսային մարմինների կողմից սահմանված պայմաններով չհավաքված կամ քանդված արտադրանքը Ներդաշնակեցված համակարգի ընդհանուր մեկնաբանության 2(ա) կանոնի իմաստով եւ Ներդաշնակեցված համակարգի XVI կամ XVII բաժիններին կամ 7308 կամ 9406 ապրանքային դիրքերին համապատասխան ներմուծվում են մասնաբաժիններով, ապա մաքսային մարմիններին այդ արտադրանքի համար ծագման մեկ ապացույց կարող է ներկայացվել՝ առաջին մասնաբաժնի ներմուծման վերաբերյալ:

2. Ներմուծողի պահանջով եւ հաշվի առնելով ներմուծող անդամ պետության մաքսային մարմինների կողմից սահմանված պայմանները՝ մաքսային մարմիններին առաջին խմբաքանակի ներմուծման ժամանակ ծագման մեկ ապացույց կարող է ներկայացվել, երբ ապրանքները՝

ա) ներմուծվում են նշանակալի կոմերցիոն արժեք ունեցող՝ հաճախ եւ շարունակական առետրային հոսքերի շրջանակներում.

- բ) վաճառքի այն նույն պայմանագրի առարկան են, որի կողմերը հիմնադրված են արտահանող երկրում կամ անդամ պետությունում (պետություններում)։
- գ) դասակարգվում են Համախմբված անվանացանկի նույն ծածկագրով (ութ թվանշան)։
- դ) մատակարարվում են բացառապես միեւնույն արտահանողի կողմից, նախատեսված են միեւնույն ներմուծողի համար եւ դարձել են նույն անդամ պետության նույն մաքսատանը մուտքագրման ձեւականությունների առարկան։

Այս ընթացակարգը կիրառվում է իրավասու մաքսային մարմինների կողմից որոշված ժամկետով։

Հոդված 97

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր տրամադրելու պարտավորությունից ազատվելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Փոքր փաթեթների տեսքով մի ֆիզիկական անձից մյուս ֆիզիկական անձին ուղարկված կամ ուղեւորի անձնական ուղեբեռի մաս կազմող արտադրանքը համարվում է ԱԸՀ սակագնային առանձնաշնորհումներից օգտվող՝ ծագում ունեցող արտադրանք՝ առանց «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատ կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր ներկայացնելու պահանջի՝ պայմանով, որ՝

ա) այդ արտադրանքը՝

i) չի ներմուծվում առեւտրի միջոցով.

ii) հայտարարագրվել է որպես ԱԸՀ սխեմայից օգտվելու համար պահանջվող պայմաններին բավարարող.

բ) (ա)(ii) կետում նշված հայտարարագրի հավաստիությունը կասկածից վեր է։

2. Ներմուծումները չեն համարվում առետրի միջոցով ներմուծումներ, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) ներմուծումը պարբերական բնույթ չի կրում.
- բ) ներմուծվում է միայն հասցեատերերի կամ ուղեւորների կամ նրանց ընտանիքի անդամների անձնական օգտագործման համար նախատեսված արտադրանք.
- գ) արտադրանքի բնույթից եւ քանակից ակնհայտ է դառնում, որ կոմերցիոն նպատակներ չեն հետապնդվում:

3. 2-րդ պարբերության մեջ նշված արտադրանքի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի 500 եվրոն՝ փոքր փաթեթների դեպքում, կամ 1 200 եվրոն՝ ուղեւորի անձնական ուղեբեռի մաս կազմող արտադրանքի դեպքում:

Հոդված 98

«Ա» ձեռի ծագման սերտիֆիկատներում կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերում անհամապատասխանությունները եւ ձեւական սխալները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. «Ա» ձեռի ծագման սերտիֆիկատում կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրում եւ արտադրանքի ներմուծման ձեւականությունների իրականացման նպատակով մաքսատանը տրամադրված փաստաթղթերում կատարված հայտարարությունների միջեւ աննշան անհամապատասխանությունների հայտնաբերմամբ սերտիֆիկատը կամ հայտարարագիրը *ipso facto* (փաստի ուժով) չի դառնում առոչինչ եւ իրավաբանական ուժ չունեցող, եթե պատշաճ կերպով հաստատվում է, որ այդ փաստաթուղթը համապատասխանում է ներկայացված արտադրանքին:

2. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատում, EUR.1 տեղափոխման սերտիֆիկատում կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրում ակնհայտ տեխնիկական սխալների պատճառով սույն փաստաթուղթը չպետք է մերժվի, եթե այս սխալները չեն կարող կասկածներ առաջացնել այդ փաստաթղթում կատարված հայտարարությունների ճշգրտության վերաբերյալ:

Ենթաբաժին 7

Գրանցված արտահանողների համակարգը կիրառելու օրվանից Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում կիրառվող՝ Միությունում ազատ շրջանառության համար բաց թողնելու ընթացակարգերը

Հոդված 99

Ծագման մասին հայտարարության վավերականությունը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Յուրաքանչյուր խմբաքանակի համար կազմվում է մեկ ծագման մասին հայտարարություն:

2. Ծագման մասին հայտարարությունը վավեր է դրա կազմման օրվանից 12 ամսվա ընթացքում:

3. Ծագման մասին միասնական հայտարարությունը կարող է պարունակել մի քանի խմբաքանակներ, եթե ապրանքները բավարարում են հետեւյալ պայմանները՝

ա) դրանք ներկայացված են չհավաքված կամ քանդված ձեւով՝ Ներդաշնակեցված համակարգի ընդհանուր մեկնաբանության 2(ա) կանոնի իմաստով.

- բ) դրանց վրա տարածվում է Ներդաշնակեցված համակարգի XVI կամ XVII բաժինները կամ 7308 կամ 9406 ապրանքային դիրքերը, եւ
- գ) դրանք նախատեսվում է ներմուծել մասնաբաժիններով:

Հոդված 100

Ծագման մասին հայտարարության ընդունելիությունը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Որպեսզի ներմուծողներն իրավունք ունենան ծագման մասին հայտարարությունը կատարելիս ԱԸՀ սխեմայից օգուտ ստանալու պահանջ ներկայացնելու, ապրանքները պետք է արտահանված լինեն այն օրը, երբ շահառու երկիրը, որից արտահանվել են ապրանքները, սկսել է գրանցել արտահանողներին՝ սույն կանոնակարգի 79-րդ հոդվածին համապատասխան:

Եթե երկիրն ընդունվել կամ վերընդունվել է որպես շահառու երկիր թիվ 978/2012 (ԵՄ) կանոնակարգում նշված արտադրանքի մասով, ապա այդ երկրի ծագում ունեցող ապրանքներն օգտվում են արտոնությունների ընդհանրացված սխեմայից այն պայմանով, որ դրանք արտահանվել են շահառու երկրից այն օրը կամ օրվանից հետո, երբ շահառու երկիրն սկսել է կիրառել սույն կանոնակարգի 70(3) հոդվածում նշված՝ գրանցված արտահանողների համակարգը:

Հոդված 101

Ծագման մասին հայտարարությունների փոխարինումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Եթե դեռեւս ազատ շրջանառության մեջ չդրված ծագում ունեցող արտադրանքը հսկողության է վերցվում անդամ պետության մաքսատանը, ուղարկողը կարող է ծագման մասին նախնական հայտարարությունը փոխարինել

ծագման մասին մեկ կամ ավելի փոխարինող հայտարարություններով (փոխարինող հայտարարություններ)՝ արտադրանքն ամբողջությամբ կամ դրա մի մասը Միության մաքսային տարածքի մաս կազմող այլ վայր կամ Նորվեգիա կամ Շվեյցարիա ուղարկելու նպատակով:

Փոխարինող հայտարարությունը կազմվում է 22-20 հավելվածի պահանջներին համապատասխան:

Ծագման մասին փոխարինող հայտարարությունները կարող են կազմվել միայն այն դեպքում, երբ ծագման մասին նախնական հայտարարությունը կազմվել է սույն կանոնակարգի 92-րդ, 93-րդ, 99-րդ եւ 100-րդ հոդվածներին եւ 22-07 հավելվածին համապատասխան:

2. Ուղարկողները գրանցվում են Միության տարածքի մաս կազմող այլ վայր ծագում ունեցող արտադրանքն ուղարկելու համար ծագման մասին փոխարինող հայտարարություններ կազմելու նպատակով, եթե կիսվելու ենթակա նախնական խմբաքանակում ծագում ունեցող արտադրանքի ընդհանուր արժեքը գերազանցում է 6 000 եվրոն:

Այնուամենայնիվ, չգրանցված ուղարկողները կարող են ծագման մասին փոխարինող հայտարարություններ կազմել, եթե կիսվելու ենթակա նախնական խմբաքանակում ծագում ունեցող արտադրանքի ընդհանուր արժեքը գերազանցում է 6 000 եվրոն, եւ եթե նրանք կցում են շահառու երկրում կազմված՝ ծագման մասին նախնական հայտարարության պատճենը:

3. Նորվեգիա կամ Շվեյցարիա ուղարկվելու ենթակա արտադրանքի առնչությամբ ծագման մասին փոխարինող հայտարարություններ կարող են կազմել միայն REX համակարգում գրանցված ուղարկողները:

4. Ծագման մասին փոխարինող հայտարարությունը վավեր է ծագման մասին նախնական հայտարարության կազմման օրվանից 12 ամսվա ընթացքում:

5. 1-4-րդ պարբերությունները կիրառվում են նաեւ ծագման մասին փոխարինող հայտարարությունը փոխարինող հայտարարության նկատմամբ:

6. Օրենսգրքի 64(6) հոդվածի համաձայն տրամադրված շեղումներին համապատասխան սակագնային առանձնաշնորհումներից օգտվող արտադրանքի դեպքում սույն հոդվածով նախատեսված փոխարինումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ այդ արտադրանքը նախատեսված է Միության համար:

Հոդված 102

Ընդհանուր սկզբունքները եւ նախազգուշական միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն հայտարարատուի կողմից

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Եթե հայտարարատուն պահանջով դիմում է արտոնագրային կերպով դիտարկել ԱԸՀ սխեմայով, նա հղում է կատարում ազատ շրջանառության համար բաց թողնելու մասով մաքսային հայտարարագրում նշված՝ ծագման մասին հայտարարությանը: Ծագման մասին հայտարարության հղումը կլինի դրա տրամադրման ամսաթիվը հետեւյալ ձեւաչափով՝ yyyymodd, որտեղ yyyy՝ տարի, mm՝ ամիս, եւ dd՝ օր: Եթե ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի ընդհանուր արժեքը գերազանցում է 6 000 եվրոն, ապա հայտարարատուն նաեւ նշում է գրանցված արտահանողի հերթական համարը:

2. Եթե հայտարարատուն պահանջով դիմել է կիրառելու ԱԸՀ սխեման՝ 1-ին պարբերությանը համապատասխան՝ ազատ շրջանառության համար բաց թողնման հայտարարագրի ընդունման ժամանակ իր տիրապետության տակ չունենալով ծագման մասին հայտարարություն, ապա այդ հայտարարագիրը համարվում է ոչ ամբողջական՝ Օրենսգրքի 166-րդ հոդվածի իմաստով, եւ դիտարկվում է համապատասխանաբար:

3. Նախքան ապրանքներն ազատ շրջանառության համար հայտարարագրելը հայտարարատուն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի ապրանքները համապատասխանեն սույն ենթաբաժնի, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժինների եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժինների կանոններին, մասնավորապես՝ ստուգելով՝

- ա) հանրային կայքում՝ արդյոք արտահանողը գրանցված է REX համակարգում, եթե ուղարկված՝ ծագում ունեցող արտադրանքի ընդհանուր արժեքը գերազանցում է 6 000 եվրոն, եւ
- բ) ծագման մասին հայտարարությունը արդյոք կազմվել է թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 22-07 հավելվածին համապատասխան:

Հոդված 103

Ծագման մասին հայտարարություն տրամադրելու պարտավորությունից ազատումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Հետեւյալ արտադրանքի մասով վերանում է ծագման մասին հայտարարություն կազմելու եւ պատրաստելու պարտավորությունը՝

- ա) փոքր փաթեթներով մասնավոր անձանց կողմից մասնավոր անձանց ուղարկվող արտադրանքը, որի ընդհանուր արժեքը չի գերազանցում 500 եվրոն.
- բ) ճամփորդողների անձնական ուղեբեռի մաս կազմող արտադրանքը, որի ընդհանուր արժեքը չի գերազանցում 1 200 եվրոն:

2. 1-ին պարբերությունում նշված արտադրանքը պետք է համապատասխանի հետեւյալ պայմաններին՝

- ա) այն չի ներմուծվում առետրի կարգով.
- բ) այն հայտարարագրվել է որպես ԱԸՀ սխեմայից օգտվելու պայմաններին համապատասխանող արտադրանք.
- գ) կասկած չկա, որ «բ» կետում նշված հայտարարագիրը հավաստի է:

3. 2-րդ պարբերության «ա» կետի նպատակներով ներմուծումը չի համարվում առետրային կարգով ներմուծում, եթե պահպանվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- ա) ներմուծումը պարբերական բնույթ չի կրում.
- բ) ներմուծումը ներառում է միայն հասցեատերերի կամ ճամփորդողների կամ նրանց ընտանիքների անձնական օգտագործման համար նախատեսված արտադրանք.
- գ) արտադրանքի բնույթից եւ քանակից ակնհայտ է դառնում, որ կոմերցիոն նպատակներ չեն հետապնդվում:

Հոդված 104

Ծագման մասին հայտարարությունների անճշտություններն ու ձեական սխալները. ծագման մասին հայտարարություններն ուշացումով ներկայացնելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Ծագման մասին հայտարարության մեջ ընդգրկված եւ արտադրանքը ներմուծելու համար պաշտոնական ընթացակարգեր իրականացնելու նպատակով մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում նշված մանրամասների միջեւ չնչին անճշտություններ հայտնաբերելը ծագման մասին հայտարարությունը *ipso facto* (փաստի ուժով) առոչինչ եւ իրավաբանական ուժ չունեցող չի դարձնում, եթե պատշաճ կերպով հաստատվել է, որ փաստաթուղթը համապատասխանում է տվյալ արտադրանքին:

2. Ծագման մասին հայտարարության մեջ ակնհայտ ձեական սխալները, ինչպիսիք են տպագրական սխալները, այդ փաստաթուղթը մերժելու պատճառ չեն, եթե այդ սխալներն այնպիսին չեն, որ կասկածներ հարուցեն փաստաթղթում արված հայտարարությունների առնչությամբ:

3. Սույն կանոնակարգի 99-րդ հոդվածում նշված վավերականության ժամկետից հետո ներմուծող երկրի մաքսային մարմիններ ներկայացված՝ ծագման մասին հայտարարությունները կարող են ընդունվել սակագնային առանձնաշնորհումներ կիրառելու նպատակով, եթե մինչև սահմանված վերջնաժամկետն այս փաստաթղթերը չներկայացնելը պայմանավորված է բացառիկ հանգամանքներով: Ուշացումով ներկայացնելու մյուս բոլոր դեպքերում ներմուծող երկրի մաքսային մարմինները կարող են ընդունել ծագման մասին հայտարարությունները, եթե արտադրանքը մաքսային մարմիններ ներկայացվել է նախքան տվյալ վերջնաժամկետը:

Հոդված 105

Ծագման մասին հայտարարությունների օգտագործմամբ՝

մասնաբաժիններով ներմուծումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Սույն կանոնակարգի 99(3) հոդվածում նշված ընթացակարգը կիրառվում է անդամ պետության մաքսային մարմինների կողմից սահմանված ժամանակահատվածի համար:

2. Ներմուծող անդամ պետությունների մաքսային մարմինները, որոնք հսկողություն են իրականացնում իրար հաջորդող՝ ազատ շրջանառության համար բաց թողնման նկատմամբ, պետք է հավաստիանան, որ իրար հաջորդող խմբաքանակները կազմում են չհավաքված կամ քանդված այն արտադրանքի մասը, որի համար կազմվել է ծագման մասին հայտարարությունը:

Առանձնաշնորհումների կիրառման կասեցումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Արտադրանքի ծագման կարգավիճակի հետ կապված կասկածներ ունենալու դեպքում մաքսային մարմինները կարող են պահանջել, որ հայտարարատուն նրանց կողմից նշված ողջամիտ ժամկետում ներկայացնի առկա ապացույցները՝ հայտարարագրի ծագման մասին նշման ճշգրտությունը կամ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 43-րդ հոդվածի պայմաններին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

2. Մաքսային մարմինները կարող են կասեցնել արտոնյալ սակագնային միջոցի կիրառումը սույն կանոնակարգի 109-րդ հոդվածում սահմանված՝ ստուգման ընթացակարգի տեղողությամբ այն դեպքում, երբ՝

ա) հայտարարատուի կողմից տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ հաստատելու համար արտադրանքի ծագման կարգավիճակը կամ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 42-րդ հոդվածում կամ այդ կանոնակարգի 43-րդ հոդվածում սահմանված պայմաններին համապատասխանությունը.

բ) հայտարարատուն չի պատասխանում 1-ին պարբերությունում նշված տեղեկատվության տրամադրման համար թույլատրված ժամանակահատվածում:

3. 1-ին պարբերությունում նշված՝ հայտարարատուից պահանջված տեղեկատվությունը կամ 2-րդ պարբերությունում նշված՝ ստուգման ընթացակարգի արդյունքներն ստանալուց առաջ արտահանողին առաջարկվում է արտադրանքի բացթողում՝ հաշվի առնելով ցանկացած անհրաժեշտ նախազգուշական միջոց:

Սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը մերժելը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Արտահանող անդամ պետության մաքսային մարմինները մերժում են սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը առանց ստիպված լինելու պահանջել ցանկացած լրացուցիչ ապացույց կամ շահառու երկրին ուղարկել ստուգման պահանջ այն դեպքում, երբ՝

- ա) ապրանքները չեն համընկնում ծագման մասին հայտարարության մեջ նշված ապրանքների հետ.
- բ) հայտարարատուն չի ներկայացնում համապատասխան արտադրանքի համար ծագման մասին հայտարարություն այն դեպքում, երբ պահանջվում է ներկայացնել այդ հայտարարությունը.
- գ) չհակասելով սույն կանոնակարգի 78(1)(բ) հոդվածին եւ 79(3) հոդվածին՝ հայտարարատուի տիրապետության տակ գտնվող՝ ծագման մասին հայտարարությունը չի կազմվել շահառու երկրում գրանցված արտահանողի կողմից.
- դ) ծագման մասին հայտարարությունը չի կազմվել 22-07 հավելվածին համապատասխան.
- ե) թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 43-րդ հոդվածի պայմանները չեն պահպանվել:

2. Ներմուծող անդամ պետության մաքսային մարմինները մերժում են տրամադրել սակագնային առանձնաշնորհումներ՝ շահառու երկրի իրավասու մարմիններին ուղղված՝ 109-րդ հոդվածի իմաստով ստուգման պահանջից հետո այն դեպքում, երբ ներմուծող անդամ պետության մաքսային մարմինները՝

- ա) ստացել են պատասխան, որի համաձայն արտահանողն իրավունք չունի կազմելու ծագման մասին հայտարարություն.

- բ) ստացել են պատասխան, որի համաձայն համապատասխան արտադրանքը շահառու երկրի ծագում չունի կամ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 42-րդ հոդվածի պայմանները չեն պահպանվել.
- գ) ունեցել են ողջամիտ կասկած՝ ծագման մասին հայտարարության վավերականության կամ տվյալ արտադրանքի իրական ծագման վերաբերյալ հայտարարատուի կողմից տրամադրված տեղեկատվության ճշգրտության հետ կապված, եթե նրանք ստուգման համար պահանջ են ներկայացրել, եւ հետեւյալ պայմաններից ոչ մեկը չի պահպանվել՝
- i) չեն ստացել որեւէ պատասխան սույն կանոնակարգի 109-րդ հոդվածին համապատասխան թույլատրված ժամկետում, կամ
 - ii) նրանք ստացել են պատասխան, որը չի ներառում համապատասխան պատասխաններ պահանջի մեջ նշված հարցերին:

Ենթաբաժին 8

Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում ծագման նկատմամբ հսկողությունը

Հոդված 108

Գրանցված արտահանողների համակարգի կիրառման օրվանից հետո իրավասու մարմինների՝ ծագման նկատմամբ հսկողության հետ կապված պարտավորությունները

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Արտադրանքի ծագման կարգավիճակի վերաբերյալ կանոններին համապատասխանությունն ապահովելու նպատակով իրավասու մարմիններն իրականացնում են՝

ա) անդամ պետությունների մաքսային մարմինների պահանջով՝ արտադրանքի ծագման կարգավիճակի ստուգումներ.

բ) արտահանողների նկատմամբ կանոնավոր հսկողություն իրենց սեփական նախաձեռնությամբ:

Առաջին ենթապարբերությունը *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) կիրառվում է Նորվեգիայի եւ Շվեյցարիայի տարածքում կազմված՝ ծագման մասին փոխարինող հայտարարությունների ստուգման համար դրանց մարմիններին ուղարկված պահանջների նկատմամբ՝ շահառու երկրի իրավասու մարմինների հետ հետազայում կապ հաստատելու վերաբերյալ այդ մարմիններին պահանջ ներկայացնելու նպատակով:

Ընդլայնված կումուլյացիան թույլատրվում է միայն թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 56-րդ հոդվածի համաձայն, եթե այն երկիրը, որի հետ Միությունն ունի գործող ազատ առեւտրի համաձայնագիր, համաձայնել է աջակցություն ցուցաբերել շահառու երկրին վարչական համագործակցության հարցերում նույն ձեւով, ինչպես այն կցուցաբերեր այդ աջակցությունը անդամ պետությունների մաքսային մարմիններին՝ տվյալ ազատ առեւտրի համաձայնագրի համապատասխան դրույթների համաձայն:

2. 1-ին պարբերության «բ» կետում նշված հսկողությամբ ապահովվում է արտահանողների կողմից իրենց պարտավորությունների շարունակական կատարումը: Այն իրականացվում է ինտերվալներով, որոնք որոշվել են ռիսկի վերլուծության համապատասխան չափորոշիչների հիման վրա: Այդ նպատակով շահառու երկրների իրավասու մարմիններն արտահանողներից պահանջում են տրամադրել իրենց կողմից կազմված՝ ծագման մասին հայտարարությունների օրինակները կամ ցուցակը:

3. Շահառու երկրների իրավասու մարմիններն իրավունք ունեն պահանջելու ցանկացած ապացույց եւ իրականացնելու արտահանողի հաշիվների ցանկացած ստուգում եւ, անհրաժեշտության դեպքում, մատակարարող

արտադրողների հաշիվների ստուգում, այդ թվում՝ տեղում, կամ իրականացնելու նպատակահարմար համարվող ցանկացած այլ ստուգում:

Հոդված 109

Ծագման մասին հայտարարությունների եւ ծագման մասին փոխարինող հայտարարությունների հետագա ստուգումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Ծագման մասին հայտարարությունների կամ ծագման մասին փոխարինող հայտարարությունների հետագա ստուգումներն իրականացվում են պատահական սկզբունքով, կամ երբ անդամ պետությունների մաքսային մարմիններն ունեն դրանց իսկության, համապատասխան արտադրանքի ծագման կարգավիճակի կամ սույն ենթաբաժնի, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժինների եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժինների այլ պահանջների կատարման հետ կապված ողջամիտ կասկածներ:

Եթե անդամ պետությունների մաքսային մարմինները շահառու երկրի իրավասու մարմիններին համագործակցության հարցում-պահանջ են ներկայացնում՝ ծագման մասին հայտարարությունների վավերականությունը, ապրանքների ծագման կարգավիճակը կամ երկուսն էլ ստուգելու համար, ապա դրանք, անհրաժեշտության դեպքում, իրենց հարցում-պահանջի մեջ նշում են ծագման մասին հայտարարության վավերականության կամ ապրանքների ծագման կարգավիճակի հետ կապված իրենց ողջամիտ կասկածների պատճառները:

Ծագման մասին հայտարարության կամ ծագման մասին փոխարինող հայտարարության օրինակը եւ ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, համաձայն որոնց այդ հայտարարության մեջ ներկայացված

տեղեկատվության մեջ կամ փոխարինող հայտարարության մեջ առկա են սխալներ, կարող են կից ուղարկվել՝ ստուգման պահանջը հիմնավորելու համար:

Պահանջ ներկայացրած անդամ պետությունը սահմանում է ստուգման արդյունքները փոխանցելու համար 6 ամիս տեւողությամբ սկզբնական վերջնաժամկետ՝ սկսած ստուգման պահանջը ներկայացնելու օրվանից, բացառությամբ Նորվեգիա կամ Շվեյցարիա ուղարկվող պահանջների, որոնք ներկայացվում են շահառու երկրում կազմված ծագման մասին հայտարարության հիման վրա նրանց տարածքներում կազմված ծագման մասին փոխարինող հայտարարությունը ստուգելու նպատակով, ինչի դեպքում վերջնաժամկետը երկարաձգվում է մինչեւ 8 ամիս:

2. Եթե ողջամիտ կասկածի առկայության դեպքում 1-ին պարբերությունում նշված ժամանակահատվածում պատասխան չի ստացվում, կամ եթե պատասխանը չի պարունակում ապրանքների իրական ծագումը որոշելու համար բավարար տեղեկատվություն, ապա իրավասու մարմիններին ուղարկվում է երկրորդ հաղորդում: Տվյալ հաղորդմամբ սահմանվում է այլ վերջնաժամկետ, որը չի կարող գերազանցել 6 ամիսը: Եթե երկրորդ հաղորդումից հետո ստուգման արդյունքները չեն փոխանցվում պահանջը ներկայացրած մարմիններին երկրորդ հաղորդումն ուղարկելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, կամ եթե այդ արդյունքը թույլ չի տալիս որոշել տվյալ փաստաթղթի իսկությունը կամ արտադրության իրական ծագումը, ապա պահանջը ներկայացրած մարմինները մերժում են սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը:

3. Եթե 1-ին պարբերությամբ նախատեսված ստուգման արդյունքում կամ առկա այլ տեղեկատվությամբ պարզվում է, որ ծագման հետ կապված կանոնները խախտվել են, ապա արտահանող շահառու երկիրն իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետությունների մաքսային մարմինների կամ Հանձնաժողովի պահանջով անցկացնում է համապատասխան քննություններ կամ ապահովում է պատշաճ հրատապությամբ այդպիսի քննություն անցկացնելու հնարավորությունը՝ այդպիսի խախտումները հայտնաբերելու եւ կանխարգելելու

համար: Այդ պատճառով Հանձնաժողովը կամ անդամ պետությունների մաքսային մարմինները կարող են մասնակցել այդ քննություններին:

Հոդված 110

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների եւ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերի հետագա ստուգումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների եւ հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերի հետագա ստուգումներն իրականացվում են պատահական սկզբունքով, կամ երբ անդամ պետությունների մաքսային մարմիններն ունեն այդ փաստաթղթերի իսկության, համապատասխան արտադրանքի ծագման կարգավիճակի կամ սույն ենթաբաժնի, սույն բաժնի 3-9-րդ ենթաբաժինների եւ թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ բաժնի 1-ին գլխի II մասի 2-րդ եւ 3-րդ ենթաբաժինների այլ պահանջների կատարման հետ կապված ողջամիտ կասկածներ:

2. Այն դեպքում, երբ նրանք պահանջ են ներկայացնում հետագա ստուգման համար, անդամ պետությունների մաքսային մարմինները պետք է վերադարձնեն «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը եւ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը, եթե այն ներկայացվել է՝ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը կամ այդ փաստաթղթերի օրինակները տվյալ արտահանող շահառու երկրում իրավասու պետական կառավարման մարմիններին, անհրաժեշտության դեպքում, տրամադրելով քննության պատճառները: Ցանկացած ձեռք բերված փաստաթուղթ կամ տեղեկատվություն, որի համաձայն ծագման ապացույցի մասին տվյալ տեղեկատվությունը ճիշտ չէ, փոխանցվում է ստուգման պահանջը հիմնավորելու համար:

Եթե անդամ պետությունների մաքսային մարմինները որոշում են կասեցնել սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը մինչեւ ստուգման

արդյունքները ստանալը, ապա արտահանողին առաջարկվում է արտադրանքի բացթողում՝ հաշվի առնելով ցանկացած անհրաժեշտ նախազգուշական միջոց:

3. Այն դեպքում, երբ ներկայացվում է հետագա ստուգման պահանջ, այդ ստուգումը պետք է իրականացվի, եւ դրա արդյունքները հաղորդվեն անդամ պետությունների մաքսային մարմիններին առավելագույնը 6 ամսվա ընթացքում կամ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատի կամ շահառու երկրում կազմված հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի հիման վրա Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի տարածքում կազմված՝ ծագման փոխարինող ապացույցները ստուգելու նպատակով Նորվեգիա, Շվեյցարիա կամ Թուրքիա ուղարկված պահանջների դեպքում՝ պահանջն ուղարկելու օրվանից առավելագույնը 8 ամսվա ընթացքում: Արդյունքները պետք է լինեն այնպիսին, որ հաստատվի, թե արդյոք ծագման տվյալ ապացույցը կիրառվում է փաստացիորեն արտահանված արտադրանքի նկատմամբ, եւ արդյոք այդ արտադրանքը կարող է համարվել որպես շահառու երկրի ծագում ունեցող արտադրանք:

4. Երկկողմ կումուլյացիայից հետո տրամադրված՝ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների դեպքում պատասխանը պետք է պարունակի EUR.1 տեղափոխման սերտիֆիկատի (սերտիֆիկատների) կամ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի (հայտարարագրերի) օրինակը (օրինակները):

5. Եթե ողջամիտ կասկածի առկայության դեպքում 3-րդ պարբերության մեջ նշված 6 ամսյա ժամկետում պատասխան չի ստացվում, կամ եթե պատասխանը չի պարունակում տվյալ փաստաթղթի իսկությունը կամ ապրանքների իրական ծագումը որոշելու համար բավարար տեղեկատվություն, ապա իրավասու մարմիններին ուղարկվում է երկրորդ հաղորդում: Եթե երկրորդ հաղորդումից հետո ստուգման արդյունքները չեն փոխանցվում պահանջ ներկայացրած մարմիններին երկրորդ հաղորդումն ուղարկելու օրվանից հետո՝ 4 ամսվա ընթացքում, կամ եթե այդ արդյունքները թույլ չեն տալիս որոշել տվյալ փաստաթղթի իսկությունը կամ ապրանքների իրական ծագումը, ապա պահանջը

ներկայացրած մարմինները մերժում են սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների դեպքերի:

6. Եթե ստուգման ընթացակարգով կամ առկա այլ տեղեկատվությամբ պարզվում է, որ ծագման հետ կապված կանոնները խախտվել են, ապա արտահանող շահառու երկիրն իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետությունների մաքսային մարմինների պահանջով անցկացնում է համապատասխան քննություն կամ ապահովում է պատշաճ հրատապությամբ այդպիսի քննություններ անցկացնելու հնարավորությունը՝ այդպիսի խախտումները հայտնաբերելու եւ կանխարգելելու համար: Այդ պատճառով Հանձնաժողովը կամ անդամ պետությունների մաքսային մարմինները կարող են մասնակցել քննություններին:

7. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների հետագա ստուգման նպատակներով արտահանողները պետք է պահպանեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հաստատում են համապատասխան արտադրանքի ծագման կարգավիճակը, եւ արտահանող շահառու երկրի իրավասու պետական կառավարման մարմինները պետք է պահպանեն սերտիֆիկատների օրինակները, ինչպես նաեւ դրանց վերաբերող՝ արտահանման ցանկացած փաստաթուղթ: Այս փաստաթղթերը պահպանվում են առնվազն 3 տարի՝ «Ա» ձեւի ծագման մասին սերտիֆիկատի տրամադրման տարվա վերջից սկսած:

Հոդված 111

Կումուլյացիայի միջոցով ծագում ստացած արտադրանքի հետ կապված՝

ծագման ապացույցների հետագա ստուգումը

(Օրենսգրքի 64(1) հոդված)

Սույն կանոնակարգի 73-րդ եւ 110-րդ հոդվածները կիրառվում են նաեւ նույն տարածաշրջանային խմբի երկրների միջեւ տեղեկատվությունը Հանձնաժողովին կամ անդամ պետությունների մաքսային մարմիններին տրամադրելու

նպատակներով եւ «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատների կամ հաշիվ-ապրանքագրերի հայտարարագրերի հետագա ստուգման նպատակներով՝ տրամադրված ծագման տարածաշրջանային կոմուլյացիայի կանոնների համաձայն:

Ենթաբաժին 9

Միության ԱԸՀ սխեմայի շրջանակներում կիրառվող այլ դրույթներ

Հոդված 112

Սեուտան եւ Մելիյան

(Օրենսգրքի 64(1) հոդված)

1. Թիվ 2015/2446 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 41-58-րդ հոդվածները կիրառվում են սահմանելիս, թե արդյոք արտադրանքը կարող է դիտարկվել որպես շահառու երկրի ծագում ունեցող արտադրանք Սեուտա կամ Մելիյա արտահանվելիս կամ որպես Սեուտայում եւ Մելիյայում արտադրված արտադրանք՝ շահառու երկիր արտահանվելիս՝ երկկողմանի կոմուլյացիայի նպատակների համար:

2. Սույն կանոնակարգի 74-79-րդ եւ 84-93-րդ հոդվածները կիրառվում են երկկողմանի կոմուլյացիայի նպատակների համար շահառու երկրից Սեուտա կամ Մելիյա արտահանված արտադրանքի եւ Սեուտայից եւ Մելիյայից շահառու երկիր արտահանված արտադրանքի նկատմամբ:

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված նպատակների համար Սեուտան կամ Մելիյան դիտարկվում են որպես մեկ տարածք:

ՀԱՎԵԼՎԱԾ 22-06

ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄԸ

Եվրոպական Միության, Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի ընդհանրացված սակագնային առանձնաշնորհումների սխեմաների նպատակների համար (1)

1. Արտահանողի անվանումը, ամբողջական հասցեն եւ երկիրը, EORI կամ TIN համարները (2):
2. Կոնտակտային տվյալները, ներառյալ՝ հեռախոսահամարը եւ ֆաքսը, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում:
3. Նշել՝ արդյոք հիմնական գործունեությունը արտադրությունն է, թե վաճառքը:
4. Արտոնյալ պայմանների հավակնող ապրանքների մոտավոր նկարագրությունը, այդ թվում՝ Ներդաշնակեցված համակարգի վերնագրերի (կամ քսանից ավելի Ներդաշնակեցված համակարգի վերնագրերում ընդգրկվող վաճառված ապրանքներ ներառող գլուխների) մոտավոր ցանկը:
5. Արտահանողի կողմից տրամադրվող պարտավորությունները՝ Սույնով ներքոստորագրյալ՝ - հաստատում է, որ վերելում ներկայացված տվյալները համապատասխանում են իրականությանը. - հավաստում է, որ նախկինում կատարված ոչ մի գրանցում չի չեղարկվել. ի հակադրություն դրա՝ հավաստում է, որ այդպիսի չեղարկման հանգեցրած իրավիճակը կարգավորվել է: - պարտավորվում է կազմել ծագման հավաստագրեր միայն արտոնյալ պայմանների հավակնող ապրանքների համար եւ համապատասխանեցնել Արտոնությունների ընդհանրացված համակարգում այդ ապրանքների համար նշված ծագման կանոններին.

- պարտավորվում է պատշաճ կոմերցիոն հաշվապահական հաշվառումներ վարել արտոնյալ պայմանների հավակնող ապրանքների արտադրության/մատակարարման վերաբերյալ եւ պահպանել դրանք այն օրացուցային տարվա վերջից առնվազն 3 տարով, երբ ծագման հավաստագիրը կազմվել է:

- պարտավորվում է անմիջապես տեղեկացնել իրավասու մարմնին գրանցված արտահանողի համար ստանալուց հետո իր գրանցման օրը տեղի ունեցած փոփոխությունների մասին.

- պարտավորվում է համագործակցել իրավասու մարմնի հետ.

- պարտավորվում է համաձայնել իր ծագման հավաստագրի ցանկացած ստուգման անցկացմանը, ներառյալ՝ հաշվապահական հաշվառումների ստուգումը եւ Եվրոպական հանձնաժողովի կամ անդամ պետությունների մարմինների, ինչպես նաեւ Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի մարմինների կողմից իր տեղամասերի այցելությունը (կիրառվում է միայն շահառու երկրներում արտահանողների նկատմամբ).

- պարտավորվում է դիմում ներկայացնել համակարգից իր հեռացման վերաբերյալ, եթե նա այլեւ չի բավարարում սխեմային համապատասխան ցանկացած ապրանքի արտահանման վերաբերյալ պայմանները:

- պարտավորվում է դիմում ներկայացնել համակարգից իր հեռացման վերաբերյալ, եթե նա այլեւ մտադրված չէ այդ ապրանքներն արտահանել սխեմային համապատասխան:

Վայր, ամսաթիվ, լիազորված անձի ստորագրություն, անուն եւ պաշտոնի անվանում

6. Արտահանողի՝ հանրային վեբ կայքում իր տվյալների հրապարակման նախնական հատուկ եւ հիմնավորված համաձայնությունը

Ներքոստորագրյալը սույնով տեղեկացված է, որ այս հայտարարագրում ներկայացված տեղեկատվությունը կարող է հրապարակվել հանրային վեբ կայքի միջոցով: Ներքոստորագրյալը համաձայնություն է տալիս հանրային վեբ կայքի միջոցով այս տեղեկատվության հրապարակմանը: Ներքոստորագրյալը կարող է հետ կանչել հանրային վեբ կայքի միջոցով այս տեղեկատվությունը հրապարակելու իր համաձայնությունը՝ դիմում ուղարկելով գրանցման համար պատասխանատու իրավասու մարմիններին:

Վայր, ամսաթիվ, լիազորված անձի ստորագրություն, անուն եւ պաշտոնի անվանում

7. Իրավասու մարմնի կողմից պաշտոնական օգտագործման համար ս

Դիմումատուն գրանցված է հետեւյալ համարով՝

Գրանցման համար՝ _____

Գրանցման ամսաթիվ՝ _____

Ամսաթիվ, որից հետո գրանցումը դառնում է վավեր _____

Ստորագրություն եւ կնիք _____

Տեղեկատվական ծանուցում

համակարգում ընդգրկված անձնական տվյալների պաշտպանության եւ
մշակման վերաբերյալ

1. Եթե Եվրոպական հանձնաժողովը մշակում է անձնական տվյալներ, որոնք ներառված են գրանցված արտահանող դառնալու այս դիմումում, կիրառվում է «Միության հաստատությունների եւ մարմինների կողմից իրականացվող անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղափոխման մասին» Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի թիվ 45/2001 կանոնակարգը (ԵՀ): Եթե շահառու երկրի կամ 95/46/ԵՀ հրահանգն իրականացնող երրորդ երկրի իրավասու մարմինները մշակում են գրանցված արտահանող դառնալու դիմումում ներառված անձնական տվյալները, ապա կիրառվում են վերը նշված հրահանգի համապատասխան ազգային դրույթները:
2. Գրանցված արտահանող դառնալու դիմումին համապատասխան անձնական տվյալները մշակվում են ԵՄ ԱԸՀ ծագման կանոնների նպատակներով՝ համապատասխան ԵՄ օրենսդրությունում սահմանված կարգով: ԵՄ ԱԸՀ ծագման կանոնները սահմանող նշված օրենսդրությունը կազմում է գրանցված արտահանող դառնալու դիմումին համապատասխան անձնական տվյալների մշակման համար իրավական հիմքը:
3. Իրավասու մարմինն այն երկրում, որտեղ ներկայացվել է դիմումը, REX համակարգում տվյալների մշակմանը համապատասխան հսկիչն է:

Իրավասու մարմինների/մաքսային վարչությունների ցանկը հրապարակված է Հանձնաժողովի վեբ կայքում:
4. Այս դիմումի բոլոր տվյալներին հասանելիությունը տրամադրվում է օգտագործողի ID-ի/գաղտնաբառի միջոցով Հանձնաժողովում, շահառու

երկրների իրավասու մարմիններում եւ անդամ պետությունների մաքսային մարմիններում օգտագործողներին, Նորվեգիային, Շվեյցարիային եւ Թուրքիային:

5. Չեղարկված գրանցման տվյալները պահպանվում են շահառու երկրի իրավասու մարմինների եւ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից 10 տարով REX համակարգում: Ժամանակահատվածը սկսվում է այն տարվա վերջից, երբ տեղի է ունեցել գրանցման չեղարկումը:
6. Տվյալների սուբյեկտն իրեն վերաբերող այն տվյալների հասանելիության իրավունք ունի, որոնք մշակվելու են REX համակարգի միջոցով, եւ, անհրաժեշտության դեպքում, ունի տվյալների ճշտման, ջնջման կամ արգելափակման իրավունք՝ թիվ 45/2001 կանոնակարգի (ԵՀ) կամ թիվ 95/46/ԵՀ հրահանգը կիրարկող ազգային օրենքների համաձայն: Հասանելիության, ճշտման, ջնջման կամ արգելափակման իրավունքի ցանկացած հարցում ներկայացվում եւ մշակվում է շահառու երկրների իրավասու մարմինների եւ անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից, որոնք պատասխանատու են գրանցման համար, համապատասխանաբար: Եթե գրանցված արտահանողն այդ իրավունքից օգտվելու վերաբերյալ հարցում է ներկայացրել Հանձնաժողով, Հանձնաժողովն այդ հարցումներն ուղարկում է շահառու երկրների իրավասու մարմիններին եւ համապատասխան անդամ պետությունների մաքսային մարմիններին, համապատասխանաբար: Եթե գրանցված արտահանողը տվյալների հսկիչից չի ստացել իր իրավունքները, ապա գրանցված արտահանողն այդ հարցումը ներկայացնում է որպես հսկիչ հանդես եկող Հանձնաժողով: Հանձնաժողովն իրավունք ունի ճշտելու, ջնջելու կամ արգելափակելու տվյալները:

7. Բողոքները կարող են հասցեագրվել տվյալների պաշտպանության համապատասխան ազգային մարմին: Տվյալների պաշտպանության համապատասխան ազգային մարմինների կոնտակտային տվյալները հասանելի են Եվրոպական հանձնաժողովի վեբ կայքում: Արդարադատության հարցերով գլխավոր տնօրինություն՝ (http://cc.europa.eu/justicc/data-protcction/bodies/authoritics/eu/index_cn.htm#h2-l).

Եթե բողոքը վերաբերում է Եվրոպական հանձնաժողովի կողմից տվյալների մշակմանը, այն պետք է հասցեագրված լինի Տվյալների պաշտպանության հարցերով Եվրոպական վերահսկիչ մարմնին (EDPS) (<http://www.edps.europa.eu/EDPSWEB/>):

- 1) Սույն դիմումի ձեւն ընդհանուր է չորս սուբյեկտների՝ Միության (ԵՄ), Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի (այսուհետ՝ սուբյեկտներ) ԱԸՀ սխեմաների համար: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ այս սուբյեկտների համապատասխան ԱԸՀ սխեմաները կարող են տարբերվել՝ ըստ երկրի եւ արտադրանքի ընդգրկման: Հետեւաբար գրանցումը կգործի միայն ԱԸՀ սխեմայի (սխեմաների) շրջանակներում արտահանման նպատակների համար, որի համաձայն Ձեր երկիրը համարվում է շահառու երկիր:
- 2) EORI համարի նշումը պարտադիր է ԵՄ արտահանողների եւ ապրանքներն ուղարկողների համար: Շահառու երկրներում արտահանողների, Նորվեգիայի, Շվեյցարիայի եւ Թուրքիայի համար TIN-ի (հարկ վճարողի նույնականացման համար) նշումը պարտադիր է:

ՀԱՎԵԼՎԱԾ 22-07

Ծագման մասին հայտարարություն

Այն կազմվում է ցանկացած կոմերցիոն փաստաթղթի վրա, որում նշվում են արտահանողի եւ ստացողի անվանումը եւ ամբողջական հասցեն, ինչպես նաեւ արտադրանքի նկարագրությունը եւ տրամադրման ամսաթիվը⁽¹⁾:

Ֆրանսերեն տարբերակ

L'exportateur ... (Numéro d'exportateur enregistré^{(2),(3),(4)}) des produits couverts par le présent document déclare que, sauf indication claire du contraire, ces produits ont l'origine préférentielle ...⁽⁵⁾ au sens des règles d'origine du Système des préférences tarifaires généralisées de l'Union européenne et que le critère d'origine satisfait est ...⁽⁶⁾

Անգլերեն տարբերակ

The exporter ... (Number of Registered Exporter^{(2),(3),(4)}) of the products covered by this document declares that, except where otherwise clearly indicated, these products are of ... preferential origin⁽⁵⁾ according to rules of origin of the Generalised System of Preferences of the European Union and that the origin criterion met is ...⁽⁶⁾. [Սույն փաստաթղթով կարգավորվող արտադրանքն արտահանողը ... (գրանցված արտահանողի համարը^{(2),(3),(4)}), հաստատում է, որ, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան հստակ նշված չէ, այս արտադրանքն ունի ... արտոնյալ ծագում⁽⁵⁾՝ Եվրոպական միության Արտոնությունների ընդհանրացված համակարգի ծագման կանոնների համաձայն, եւ որ համապատասխան ծագման չափորոշիչը ...⁽⁶⁾:]

Իսպաներեն տարբերակ

El exportador ... (Número de exportador registrado^{(2),(3),(4)}) de los productos incluidos en el presente documento declara que, salvo indicación en sentido contrario, estos productos gozan de un origen preferencial ...⁽⁵⁾ en el sentido de las normas de

origen del Sistema de preferencias generalizado de la Unión europea y que el criterio de origen satisfecho es⁽⁶⁾.

⁽¹⁾ Եթե ծագման մասին հայտարարությամբ փոխարինվում է մեկ այլ հայտարարություն՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 101(2) եւ (3) հոդվածին համապատասխան, որով սահմանվում է թիվ 952/2013 (ԵՄ) կանոնակարգի որոշակի դրույթների կիրարկման մանրամասն կանոնները (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 558-րդ էջը), ապա ծագման մասին փոխարինող հայտարարության մեջ պարունակվում է ‘Replacement statement’ [«Փոխարինող հավաստագիր»] կամ ‘Attestation de remplacement’ կամ ‘Comunicación de sustitución’ նշումը: Փոխարինող հայտարարության մեջ նաեւ նշվում են նախնական հայտարարության տրամադրման ամսաթիվը եւ մնացած բոլոր անհրաժեշտ տվյալները՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 82(6) հոդվածի համաձայն:

⁽²⁾ Եթե ծագման մասին հայտարարությամբ փոխարինվում է այլ հայտարարություն՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 101(2) հոդվածի 1-ին ենթապարբերության եւ 101-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն, ապա այդ հայտարարությունը կազմող՝ ապրանք ուղարկողը նշում է իր անվանումը եւ ամբողջական հասցեն, ինչպես նաեւ գրանցված արտահանողի իր հերթական համարը:

⁽³⁾ Եթե ծագման մասին հայտարարությամբ փոխարինվում է մեկ այլ հայտարարություն՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 101(2) հոդվածի 2-րդ ենթապարբերության համաձայն, ապա այդպիսի հայտարարություն կազմող՝ ապրանքներն ուղարկողը նշում է իր անվանումը եւ լրիվ հասցեն՝ կատարելով հետեւյալ նշումները՝ (*ֆրանսերեն տարբերակ*) ‘agissant sur la base de l’attestation d’origine établie par [nom et adresse complète de l’exportateur dans le pays bénéficiaire], enregistré sous le numéro suivant [Numéro d’exportateur enregistré dans le pays bénéficiaire]’, (*անգլերեն տարբերակ*) ‘acting on the basis of the statement on origin made out by [name and complete address of the exporter in the beneficiary country], registered under the following number [Number of Registered Exporter of the exporter in the beneficiary country]’ [«գործելով հետեւյալ համարով գրանցված [Արտահանողի՝ Գրանցված արտահանողի համարը շահառու երկրում] [արտահանողի անունը եւ շահառու երկրում ամբողջական հասցեն] կողմից կազմված ծագման հավաստագրի հիման վրա»], (*իսպաներեն տարբերակ*) ‘actuando sobre la base de la comunicación extendida por [nombre y dirección completa del exportador en el país beneficiario], registrado con el número siguiente [Número de exportador registrado del exportador en el país beneficiario]’:

(4) Եթե ծագման մասին հայտարարությամբ փոխարինվում է մեկ այլ հայտարարություն՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 101(2) հոդվածի համաձայն, ապա ապրանքներն ուղարկողը նշում է գրանցված արտահանողի հերթական համարը, միայն եթե նախնական խմբաքանակում ծագում ունեցող արտադրանքի արժեքը գերազանցում է 6 000 եվրոն:

(5) Նշել արտադրանքի ծագման երկիրը: Եթե ծագման մասին հայտարարությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերաբերում է Սեուտայի եւ Մելիլյայի ծագում ունեցող արտադրանքին՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 112-րդ հոդվածի իմաստով, ապա արտահանողը պետք է դրա մասին հստակորեն նշի փաստաթղթում, որի մասով 'XC/XL' նշանի միջոցով կազմվել է հայտարարությունը:

(6) Ամբողջությամբ ստացված արտադրանքի համար մուտքագրել 'P' տառը. բավարար կերպով մշակված արտադրանքի համար մուտքագրել 'W' տառը, այնուհետեւ՝ Ներդաշնակեցված համակարգի ապրանքային դիրքը (օրինակ՝ 'W'9618):

Անհրաժեշտության դեպքում վերը նշվածը փոխարինվում է հետեւյալ նշումներից մեկով՝

- ա) Երկկողմ կումուլյացիայի դեպքում՝ 'EU cumulation' [«ԵՄ կումուլյացիա»], 'Cumul UE' կամ 'Acumulación UE':
- բ) Նորվեգիայի, Շվեյցարիայի կամ Թուրքիայի մասով կումուլյացիայի դեպքում՝ 'Norway cumulation', 'Switzerland cumulation', 'Turkey cumulation' [«Ներվեգիայի կումուլյացիա», «Շվեյցարիայի կումուլյացիա», «Թուրքիայի կումուլյացիա»], 'Cumul Norvège', 'Cumul Suisse', 'Cumul Turquie' կամ 'Acumulación Noruega', 'Acumulación Suiza', կամ 'Acumulación Turquía':
- գ) Տարածաշրջանային կումուլյացիայի դեպքում՝ 'regional cumulation' [«տարածաշրջանային կումուլյացիա»], 'cumul regional' կամ 'Acumulación regional':
- դ) Ընդլայնված կումուլյացիայի դեպքում՝ 'extended cumulation with country x' [«երկարացված կումուլյացիա x երկրի հետ»], 'cumul étendu avec le pays x' կամ 'Acumulación ampliada con el país x':

ՀԱՎԵԼՎԱԾ 22-08

«Ա» ձեւի ծագման սերտիֆիկատը

1. «Ա» ձեւի ծագման սերտիֆիկատները պետք է համապատասխանեն սույն հավելվածում նշված նմուշին: Սերտիֆիկատի դարձերեսին նշումների համար անգլերենի կամ ֆրանսերենի օգտագործումը պարտադիր չէ: Սերտիֆիկատները կազմվում են անգլերենով եւ ֆրանսերենով: Եթե դրանք ձեռագիր են լրացվում, ապա մուտքագրումները պետք է լրացվեն թանաքով եւ մեծատառերով:
2. Յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է կազմի 210×297 մմ. կարող է թույլատրվել երկարության եւ լայնության շեղում մինչեւ -5 մմ կամ $+8$ մմ: Օգտագործվող թուղթը պետք է լինի գրելու համար նախատեսված սպիտակ թուղթ, չափված, առանց փայտանյութային զանգվածի եւ կշռելով առնվազն 25 գ/մ²: Դրանք պետք է ունենան կանաչ տպագրված գիյոշային պատկերներով հետնապատկեր, որը մեխանիկական կամ քիմիական եղանակով կատարված ցանկացած կեղծում տեսանելի կդարձնի աչքի համար:

Եթե սերտիֆիկատները բաղկացած են մի քանի օրինակից, ապա միայն առաջին օրինակը, որը բնօրինակն է, տպագրվում է կանաչ տպագրված գիյոշային պատկերներով:
3. Յուրաքանչյուր սերտիֆիկատ կրում է տպագրված կամ այլ կերպ ներկայացված սերիական համար, որով այն կարող է նույնականացվել:
4. Ձեւի դարձերեսի նշումների ավելի հին տարբերակներով սերտիֆիկատները նույնպես կարող են օգտագործվել՝ մինչեւ առկա պահուստային օրինակների սպառվելը:

1. (Արտահանողի առետրային անվանումը, հասցեն, երկիրը) բեռնառաքված ապրանքները			Տեղեկանք թիվ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ (Համակցված հայտարարագիր եւ սերտիֆիկատ) ՁԵՎ Ա տրամադրված է _____ (երկիր) Տե՛ս ծանոթագրությունը դարձերեսին		
2. (Ստացողի անվանումը, հասցեն, երկիրը) բեռնառաքված ապրանքները			4. Պաշտոնական գործածության համար		
3. Տրանսպորտային միջոցը եւ երթուղին (որքանով հայտնի է)					
5. հերթական համարը	6. Փաթեթների մականշվածքները եւ համարները	7. Փաթեթների քանակն ու տեսակները, ապրանքների նկարագիրը	8. Ապրանքի ծագման չափորոշիչը (տե՛ս ծանոթագրությունը դարձերեսին)	9. Համաքաշը կամ այլ քանակություն	10. Հաշիվ ապրանքագրերի համարն ու ամսաթիվը
11. Սերտիֆիկացումը Իրականացված հսկողության հիման վրա սույնով հաստատվում է, որ արտահանողի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը			12. Արտահանողի հայտարարագիրը Ներքոստորագրյալը սույնով հաստատում է, որ վերը նշված տվյալները եւ հավաստագրերը համապատասխանում են իրականությանը, որ բոլոր ապրանքներն արտադրվել են, (երկիր) եւ որ դրանք համապատասխանում են այդ ապրանքների համար Արտոնությունների ընդհանրացված համակարգում նշված ծագման պահանջներին՝ այն ապրանքների համար, որոնք արտահանվել են (ներմուծող երկիր) Վայր եւ ամսաթիվ, ստորագրություն եւ սերտիֆիկացնող մարմնի կնիք Վայր եւ ամսաթիվ, լիազորված ստորագրող կողմի ստորագրություն		

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ (2013)

I. Երկրները, որոնք ընդունում են Ա ձեռք Արտոնությունների ընդհանրացված համակարգի նպատակներով (ԱԸՀ)՝

Ավստրալիա*	Եվրոպական միություն՝	Ֆրանսիա	Նիդեռլանդներ
Բելառուս	Ավստրիա	Գերմանիա	Լեհաստան
Կանադա	Բելգիա	Հունաստան	Պորտուգալիա
Իսլանդիա	Բուլղարիա	Հունգարիա	Ռումինիա
Ճապոնիա	Խորվաթիա	Իռլանդիա	Սլովակիա
Նոր Զելանդիա**	Կիպրոս	Իտալիա	Սլովենիա
Նորվեգիա	Չեխիայի Հանրապետություն Լատվիա		Իսպանիա
Ռուսաստանի Դաշնություն	Դանիա	Լիտվա	Շվեդիա
Շվեյցարիա, ներառյալ՝ Լիխտենշտեյն***	Էստոնիա	Լյուքսեմբուրգ	Միացյալ Թագավորություն
Թուրքիա	Ֆինլանդիա	Մալթա	
Ամերիկայի Միացյալ Նահանգներ****			

Այս երկրներում ԱԸՀ ընդունվելը ներառող պայմանների ամբողջական տվյալները հասանելի են արտահանման արտոնություն ստացող երկրներում նշանակված մարմիններում կամ վերը նշված՝ արտոնություն տրամադրող երկրների մաքսային մարմիններում: Տեղեկատվական ծանոթագրությունը հասանելի է նաեւ ՄԱԱԶԽ-ի քարտուղարությունում:

II. Ընդհանուր պայմանները

Արտոնություններին հավակնելու համար արտադրանքը պետք է՝

- ա) համապատասխանի նպատակակետ երկրում արտոնության համար ընդունելի արտադրանքի նկարագրին: Ձեռում մուտքագրված նկարագիրը պետք է բավականաչափ մանրամասն լինի, որպեսզի արտադրանքը հնարավոր լինի նույնականացնել այն զննող մաքսային ծառայողի կողմից.
- բ) բավարարի նպատակակետ երկրի ծագման կանոնները: Խմբաքանակի բեռնառաքման յուրաքանչյուր իր պետք է առանձին քննարկվի պայմանները բավարարելու մասով. եւ
- գ) բավարարի նպատակակետ երկրի կողմից նշված բեռնառաքման պայմանները: Ընդհանուր առմամբ արտադրանքը պետք է բեռնառաքվի ուղղակիորեն արտահանման երկրից նպատակակետ երկիր, սակայն արտոնություն տվող շատ երկրներ ընդունում են որոշակի պայմանների բավարարման ենթակա միջանկյալ երկրներով անցումը: (Ավստրալիայի դեպքում ուղղակի խմբաքանակի բեռնառաքում անհրաժեշտ չէ):

III. 8-րդ վանդակում կատարվելիք մուտքերը

Արտոնյալ արտադրանքը պետք է կա՛մ ամբողջապես ստացվի նպատակակետ երկրի կանոններին համապատասխան, կա՛մ բավարար կերպով մշակվի այդ երկրի ծագման կանոնների պահանջները բավարարելու համար:

- ա) Ամբողջությամբ ստացված արտադրանք՝ I բաժնում նշված երկրներ արտահանելու համար, մուտքագրել "P" տառը 8-րդ վանդակում (Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի համար 8-րդ վանդակը կարող է դատարկ թողնվել)
- բ) Բավարար կերպով մշակված արտադրանք՝ ներքոնշյալ երկրներ արտահանելու համար, 8-րդ վանդակում մուտքագրումը պետք է կատարվի հետևյալ կերպով՝
 - 1) Ամերիկայի Միացյալ Նահանգներին՝ սահմանել առաքումներ մեկ երկրից, մուտքագրել "Y" տառը 8-րդ վանդակում, երկրների ճանաչված

խմբերից առաքումների համար մուտքագրել "Z" տառը, որից հետո լրացնել նյութերի ընդհանուր արժեքը կամ ընդհանուր ծախսը եւ արտահանված արտադրանքի մեծածախ գնի տոկոսով արտահայտված՝ մշակման ուղղակի արժեքը. (օրինակ՝ "Y" 35% կամ "Z" 35%):

- 2) Կանադային՝ այն արտադրանքի համար, որը համապատասխանում է մեկից ավելի ընդունելի առավել թույլ զարգացած երկրներում մշակման մասով ծագման չափորոշչին, մուտքագրել "G" տառը 8-րդ վանդակում. այլ դեպքերում՝ "F" տառը:
- 3) Իսլանդիային, Եվրոպական Միությանը, Ճապոնիային, Նորվեգիային, Շվեյցարիային, ներառյալ՝ Լիխտենշտեյնը, եւ Թուրքիային՝ մուտքագրել 8-րդ վանդակում "W" տառը՝ ավելացնելով Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի (Ներդաշնակեցված համակարգ) դիրքը արտահանված արտադրանքի 4 նիշանոց մակարդակի վրա (օրինակ՝ "W" 96.18):
- 4) Ռուսաստանի Դաշնությանը՝ արտահանման արտոնություն ստացող երկրում ավելացված արժեք ներառող արտադրանքի համար մուտքագրել 8-րդ վանդակում "Y" տառը՝ ավելացնելով ներմուծված նյութերի եւ բաղադրիչների արժեքը՝ արտահայտված արտահանված արտադրանքի FOB արժեքի տոկոսով (օրինակ՝ "Y" 45%). արտոնություն ստացող երկրում ստացված եւ մեկ կամ մի քանի այլ նման երկրներում մշակված արտադրանքի համար մուտքագրել "Pk" տառերը:
- 5) Ավստրալիային եւ Նոր Զելանդիային՝ 8-րդ վանդակը լրացնել չի պահանջվում: Բավական է, որ հայտարարագիրը 12-րդ վանդակին համապատասխան՝ պատշաճ կերպով լրացված լինի:

* Ավստրալիայի համար հիմնական պահանջը սովորական կոմերցիոն հաշիվ-ապրանքագրում արտահանողի հայտարարագիրն է: Սովորական կոմերցիոն հաշիվ-

ապրանքագրին կցված Ա ձեռն ընդունելի այլընտրանք է, սակայն պաշտոնական սերտիֆիկացում չի պահանջվում:

** Պաշտոնական սերտիֆիկացում չի պահանջվում:

*** Լիխտենշտեյնի Իշխանապետությունը, 1923 թվականի մարտի 29-ի պայմանագրի համաձայն, Շվեյցարիայի հետ մաքսային միության կազմում է:

**** Ամերիկայի Միացյալ Նահանգներից չի պահանջվում ունենալ ԱԸՀ Ա ձեռն: Արտադրանքի արտադրության վերաբերյալ գործին առնչվող ամբողջ մանրամասն տեղեկատվությունը սահմանող հայտարարագիրը համարվում է բավարար միայն այն դեպքում, երբ պահանջվում է Մաքսային մարմնի տարածքային լիազորված տեսուչի կողմից:

1. Expéditeur (nom, adresse, pays de l'exportateur)		Référence N° SYSTÈME GÉNÉRALISÉ DE PRÉFÉRENCES CERTIFICAT D'ORIGINE (Déclaration et certificat) FORMULE A Délivré en (pays) Voir notes au verso			
2. Destinataire (nom, adresse, pays)					
3. Moyen de transport et itinéraire (si connus)		4. Pour usage officiel			
5. N° d'ordre	6. Marques et numéros des colis	7. Nombre et type de colis; description des marchandises	8. Critère d'origine (voir notes au verso)	9. Poids brut ou quantité	10. N° et date de la facture
11. Certificat Il est certifié, sur la base du contrôle effectué, que la déclaration de l'exportateur est exacte. Lieu et date, signature et timbre de l'autorité délivrant le certificat			12. Déclaration de l'exportateur Le soussigné déclare que les mentions et indications ci-dessus sont exactes, que toutes ces marchandises ont été produites en (nom du pays) et qu'elles remplissent les conditions d'origine requises par le système généralisé de préférences pour être exportées à destination de (nom du pays importateur) Lieu et date, signature du signataire habilité		

NOTES (2013)

I. Pays acceptant la formule A aux fins du système des préférences généralisées (SPG):

Australie*	Union européenne:	Finlande	Pays-Bas
Belarus	Allemagne	France	Pologne
Canada	Autriche	Grèce	Portugal
Etats-Unis d'Amérique***	Belgique	Hongrie	République tchèque
Fédération de Russie	Bulgarie	Irlande	Roumanie
Islande	Chypre	Italie	Royaume-Uni
Japon	Croatie	Lettonie	Slovaquie
Norvège	Danemark	Lituanie	Slovénie
Nouvelle-Zélande**	Espagne	Luxembourg	Suède
Suisse y compris Liechtenstein****	Estonie	Malte	
Turquie			

Des détails complets sur les conditions régissant l'admission au bénéfice du SGP dans ce pays peuvent être obtenus des autorités désignées par les pays exportateurs bénéficiaires ou de l'administration des douanes des pays donneurs qui figurent dans la liste ci-dessus. Une note d'information peut également être obtenue du secrétariat de la CNUCED.

II. Conditions générales

Pour être admis au bénéfice des préférences, les produits doivent:

- correspondre à la définition établie des produits pouvant bénéficier du régime de préférences dans les pays de destination. La description figurant sur la formule doit être suffisamment détaillée pour que les produits puissent être identifiés par l'agent des douanes qui les examine;
- satisfaire aux règles d'origine du pays de destination. Chacun des articles d'une même expédition doit répondre aux conditions prescrites; et
- satisfaire aux conditions d'expédition spécifiées par le pays de destination. En général, les produits doivent être expédiés directement du pays d'exportation au pays de destination; toutefois, la plupart des pays donneurs de préférences acceptent sous certaines conditions le passage par des pays intermédiaires (pour l'Australie, l'expédition directe n'est pas nécessaire).

III. Indications à porter dans la case 8

Pour bénéficier des préférences, les produits doivent avoir été, soit entièrement obtenus, soit suffisamment ouverts ou transformés conformément aux règles d'origine des pays de destination.

- Produits entièrement obtenus: pour l'exportation vers tous les pays figurant dans la liste de la section, il y a lieu d'inscrire la lettre "P" dans la case 8 (pour l'Australie et la Nouvelle-Zélande, la case 8 peut être laissée en blanc).
- Produits suffisamment ouverts ou transformés: pour l'exportation vers les pays figurant ci-après, les indications à porter dans la case 8 doivent être les suivantes:
 - Etats-Unis d'Amérique: dans le cas d'expédition provenant d'un seul pays, inscrire la lettre "Y" ou, dans le cas d'expéditions provenant d'un groupe de pays reconnu comme un seul, la lettre "Z", suivie de la somme du coût ou de la valeur des matières et du coût direct de la transformation, exprimée en pourcentage du prix départ usine des marchandises exportées (exemple: "Y" 35% ou "Z" 35%);
 - Canada: il y a lieu d'inscrire dans la case 8 la lettre "G" pour les produits qui satisfont aux critères d'origine après ouvroissement ou transformation dans plusieurs des pays les moins avancés; sinon, inscrire la lettre "F";
 - Islande, Japon, Norvège, Suisse y compris Liechtenstein, Turquie et l'Union européenne: inscrire dans la case 8 la lettre "W" suivie de la position tarifaire à quatre chiffres occupée par le produit exporté dans le Système harmonisé de désignation et de codification des marchandises (Système harmonisé) (exemple "W" 96.18);
 - Fédération de Russie: pour les produits avec valeur ajoutée dans le pays exportateur bénéficiaire de préférences, il y a lieu d'inscrire la lettre "Y" dans la case 8, en la faisant suivre de la valeur des matières et des composants importés, exprimée en pourcentage du prix fob des marchandises exportées (exemple: "Y" 45%); pour les produits obtenus dans un pays bénéficiaire de préférences et ouverts ou transformés dans un ou plusieurs autres pays bénéficiaires, il y a lieu d'inscrire les lettres "Pk" dans la case 8;
 - Australie et Nouvelle-Zélande: il n'est pas nécessaire de remplir la case 8. Il suffit de faire une déclaration appropriée dans la case 12.

* Pour l'Australie, l'exigence de base est une attestation de l'exportateur sur la facture habituelle. La formule A, accompagnée de la facture habituelle, peut être acceptée en remplacement, mais une certification officielle n'est pas exigée.

** Un visa officiel n'est pas exigé.

*** Les Etats-Unis n'exigent pas de certificat SGP Formule A. Une déclaration reprenant toute information appropriée et détaillée concernant la production ou la fabrication de la marchandise est considérée comme suffisante, et doit être présentée uniquement à la demande du receveur des douanes du district (District collector of Customs).

**** D'après l'Accord du 29 mars 1923, la Principauté du Liechtenstein forme une union douanière avec la Suisse.

Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը

Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը, որի տեքստը ներկայացված է ստորեւ, պետք է կազմվի ծանոթագրությունների համաձայն: Այնուամենայնիվ, ծանոթագրությունները պարտադիր չէ վերարտադրել:

Ֆրանսերեն տարբերակ

L'exportateur des produits couverts par le présent document [autorisation douanière no ...⁽¹⁾] déclare que, sauf indication claire du contraire, ces produits ont l'origine préférentielle ...⁽²⁾ au sens des règles d'origine du Système des préférences tarifaires généralisées de l'Union européenne et ...⁽³⁾.

Անգլերեն տարբերակ

The exporter of the products covered by this document (customs authorisation No ...⁽¹⁾) declares that, except where otherwise clearly indicated, these products are of ... preferential origin⁽²⁾ according to rules of origin of the Generalised System of Preferences of the European Union and ...⁽³⁾. [Սույն փաստաթղթով կարգավորվող արտադրանքն արտահանողը (թիվ ...⁽¹⁾ մաքսային թույլատվություն) հաստատում է, որ, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան հստակ նշված չէ, այս արտադրանքն ունի ... արտոնյալ ծագում⁽²⁾՝ Եվրոպական միության Արտոնությունների ընդհանրացված համակարգի ծագման կանոնների համաձայն եւ ...⁽³⁾:]

Իսպաներեն տարբերակ

El exportador de los productos incluidos en el presente documento (autorización aduanera nº ...⁽¹⁾) declara que, salvo indicación en sentido contrario, estos productos gozan de un origen preferencial ...⁽²⁾ en el sentido de las normas de origen del Sistema de preferencias generalizado de la Unión europea y ...⁽³⁾.

(վայրը ու ամսաթիվը)⁽⁴⁾

(Արտահանողի ստորագրությունը, նաեւ հայտարարագիրը ստորագրող անձի անունը պետք է նշվեն հասկանալի ձեռագրով) ⁽⁵⁾

⁽¹⁾ Եթե հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը կազմվել է Եվրոպական միության հաստատված արտահանողի կողմից թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 77(4) հոդվածի իմաստով, որով սահմանվում է թիվ 952/2013 (ԵՄ) կանոնակարգի որոշակի դրույթների կիրարկման մանրամասն կանոնները (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 558-րդ էջը), ապա հաստատված արտահանողի թույլտվության համարը պետք է մուտքագրվի այս դաշտում: Եթե հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը չի կազմվում հաստատված արտահանողի կողմից (ինչպես միշտ կլինի շահառու երկրներում կազմված հաշիվ-ապրանքագրի հայտարարագրերի մասով), ապա փակագծերում բառերն անտեսվում են, կամ դաշտը թողնվում է դատարկ:

⁽²⁾ Նշել արտադրանքի ծագման երկիրը: Եթե հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերաբերում է Սեուտայի եւ Մեյլյայի ծագում ունեցող արտադրանքին՝ թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 112-րդ հոդվածի իմաստով, ապա արտահանողը պետք է դրա մասին հստակորեն նշի փաստաթղթում, որի մասով ‘CM’ նշանի միջոցով կազմվել է հայտարարագիրը:

⁽³⁾ Անհրաժեշտության դեպքում մուտքագրել հետեւյալ նշումներից որեւէ մեկը՝ ‘EU cumulation’, ‘Norway cumulation’, ‘Switzerland cumulation’, ‘Turkey cumulation’, ‘regional cumulation’, ‘extended cumulation with country x’ [«ԵՄ կումուլացիա», «Ներվեգիայի կումուլացիա», «Շվեյցարիայի կումուլացիա», «Թուրքիայի կումուլացիա», «տարածաշրջանային կումուլացիա», «երկարացված կումուլացիա x երկրի հետ»] կամ ‘Cumul UE’, ‘Cumul Norvège’, ‘Cumul Suisse’, ‘Cumul Turquie’, ‘cumul regional’, ‘cumul étendu avec le pays x’ կամ ‘Acumulación UE’, ‘Acumulación Noruega’, ‘Acumulación Suiza’, ‘Acumulación Turquía’, ‘Acumulación regional’, ‘Acumulación ampliada con en país x’:

⁽⁴⁾ Այս նշումները կարող են բաց թողնվել, եթե տեղեկատվությունը պարունակվում է անմիջապես փաստաթղթում:

⁽⁵⁾ Տես թիվ 2015/2447 (ԵՄ) կիրարկող կանոնակարգի 77(7) հոդվածը (վերաբերում է միայն Եվրոպական միության հաստատված արտահանողներին): Այն դեպքերում, երբ արտահանողի ստորագրությունը չի պահանջվում, ստորագրության պահանջից ազատումը ենթադրում է նաեւ ստորագրողի անունը նշելու պահանջից ազատում:

ՀԱՎԵԼՎԱԾ 22-10

EUR.1 տեղափոխման սերտիֆիկատը եւ համապատասխան դիմումները

- 1) EUR.1 տեղափոխման սերտիֆիկատը կազմվում է այն ձեռքով, որի նմուշը ներառված է սույն հավելվածում: Սույն ձեռք տպագրվում է Միության պաշտոնական լեզուներից որեւէ մեկով: Սերտիֆիկատները կազմվում են այս լեզուներից մեկով եւ արտահանող պետության կամ տարածքի ներպետական օրենսդրության դրույթներին համապատասխան: Եթե դրանք ձեռագիր են, ապա պետք է լրացվեն թանաքով եւ մեծատառերով:
- 2) Յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է կազմի 210×297 մմ. կարող է թույլատրվել երկարության շեղում մինչեւ - 5 մմ կամ + 8 մմ: Օգտագործվող թուղթը պետք է լինի սպիտակ, գրելու համար նախատեսված չափսերով, առանց փայտանյութային զանգվածի եւ կշռելով առնվազն 25 գ/մ^2 : Դրանք պետք է ունենան կանաչ տպագրված գիլոշային պատկերներով հետնապատկեր, որը մեխանիկական կամ քիմիական եղանակով կատարված ցանկացած կեղծում տեսանելի կդարձնի աչքի համար:
- 3) Արտահանող պետության կամ տարածքի իրավասու մարմինները կարող են իրավունք վերապահել իրենց կողմից սերտիֆիկատները տպագրելու կամ կարող են տպագրման տալ հաստատված տպագրողների մոտ: Վերջին դեպքում յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է պարունակի այդ հաստատմանը կատարված հղում: Յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է կրի տպագրիչի անվանումը եւ հասցեն կամ նշան, որով կարող է տպագրիչը նույնականացվել: Այն կրում է նաեւ տպագրված կամ չտպագրված սերիական համար, որով այն կարող է նույնականացվել:

ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ

1. Արտահանողի (Անվանում, ամբողջական հասցե, երկիր)	EUR.1 թիվ Ա 000.000		
	Տե՛ս դարձերեսին ծանոթագրությունը նախքան այս ձեւը լրացնելը		
2. Սերտիֆիկատ, որն օգտագործվում է արտոնյալ պայմաններով առևտրում			
3. Ստացողի (Անվանում, ամբողջական հասցե, երկիր) միջև (կամընտիր)	 Եւ (ավելացնել համապատասխան երկրները, երկրների խմբերը կամ տարածքները)		
	4. Երկրներ, երկրների խմբեր կամ տարածք, որտեղ արտադրանքը համարվում է ծագում ունեցող	5. Երկիր, երկրների խումբ կամ նպատակակետ տարածք	
6. Տրանսպորտային փոխադրման տվյալները (կամընտիր)	7. Նշումներ		
8. Հերթական համար. Մականշվածքներ եւ համարներ. Փաթեթվածքների քանակ եւ տեսակ (¹). Ապրանքների նկարագիր	9. Անզուտ քաշ (կգ) կամ այլ չափման միավոր (լիտր, մ³ եւ այլն)	10. Հաշիվ ապրանքագրեր (կամընտիր)	
11. ՄԱՔՍԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՈՒՄ Հաստատված հայտարարագիր Արտահանման փաստաթուղթ (²) Ձեւ թիվ կողմից Մաքսատուն Տրամադրող երկիր կամ տարածք (Վայր եւ ամսաթիվ) (Ստորագրություն)		12. ԱՐՏԱՀԱՆՈՂԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ Ես՝ ներքոստորագրյալս, հաստատում եմ, որ վերը նշված ապրանքները բավարարում են սույն սերտիֆիկատի տրամադրման համար պահանջվող պայմանները (Վայր եւ ամսաթիվ) (Ստորագրություն)	
(¹) Եթե ապրանքները փաթեթավորված չեն, նշել իրերի քանակը կամ «փաթեթավորված չէ» նշումը, համապատասխանաբար:			
(²) Լրացնել միայն այնտեղ, որտեղ պահանջվում է արտահանող երկրի կամ տարածքի կանոնակարգերով:			

13. ՍՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՒՄ , ուղղված	14. ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
	Իրականացված ստուգումը ցույց է տալիս, որ սույն սերտիֆիկատը (!)
	☐ տրամադրվել է նշված մաքսատան կողմից, եւ դրանում ներառված տեղեկատվությունը ճշգրիտ է:
	☐ չի համապատասխանում իսկության եւ ճշգրտության հետ կապված պահանջներին (տե՛ս կցված նշումները):
Պահանջվում է սույն սերտիֆիկատի իսկության եւ ճշգրտության ստուգում:	
..... (Վայր եւ ամսաթիվ)	 (Վայր եւ ամսաթիվ)
..... (Ստորագրություն)	 (Ստորագրություն)
	
	(!) Նշել X համապատասխան վանդակում:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Սերտիֆիկատը չպետք է ներառի ջնջումներ կամ իրար վրա գրված բառեր: Ցանկացած փոփոխություն պետք է կատարվի՝ հանելով սխալ նշումները եւ ավելացնելով անհրաժեշտ ուղղումներ: Այդպիսի ցանկացած փոփոխություն պետք է կատարվի սերտիֆիկատը լրացրած անձի կողմից եւ հաստատվի տրամադրող երկրի կամ տարածքի Մաքսային մարմինների կողմից:
2. Սերտիֆիկատում մուտքագրված արտադրատեսակների միջեւ չպետք է լինի դատարկ դաշտ, եւ յուրաքանչյուր արտադրատեսակին պետք է նախորդի հերթական համարը: Անմիջապես վերջին արտադրատեսակի ներքեւում պետք է անցկացվի հորիզոնական գիծ: Չօգտագործված դաշտը պետք է ընդգծվի այնպես, որ հետագայում լրացումների կատարումը հնարավոր չլինի:
3. Ապրանքները պետք է նկարագրվեն առետրային գործելակերպին համապատասխան եւ բավականին մանրամասն կերպով, որպեսզի դրանք հնարավոր լինի նույնականացնել:

ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԴԻՄՈՒՄ

1. Արտահանողի (Անվանում, ամբողջական հասցե, երկիր)	EUR.1 թիվ Ա 000.000		
	Տե՛ս դարձերեսին ծանոթագրությունը նախքան այս ձեւը լրացնելը		
	2. Դիմում սերտիֆիկատի համար, որը պետք է օգտագործվի արտոնյալ պայմաններով առևտրում		
3. Ստացողի (Անվանում, ամբողջական հասցե, երկիր) միջեւ (կամընտիր)	 Եւ (ավելացնել համապատասխան երկրները, երկրների խմբերը կամ տարածքները)		
	4. Երկրներ, երկրների խմբեր կամ տարածք, որտեղ արտադրանքը համարվում է ծագում ունեցող	5. Երկիր, երկրների խումբ կամ նպատակակետ տարածք	
	6. Տրանսպորտային փոխադրման տվյալները (կամընտիր)		
7. Նշումներ			
8. Հերթական համար. Մականշվածքներ եւ համարներ. Փաթեթվածքների քանակ եւ տեսակ (/).	Ապրանքների նկարագիր	9. Անգուտ քաշ (կգ) կամ այլ չափման միավոր (լիտր, մ ³ եւ այլն)	10. Հաշիվ ապրանքագրեր (կամընտիր)
(/) Եթե ապրանքները փաթեթավորված չեն, նշել իրերի քանակը կամ «փաթեթավորված չէ» նշումը, համապատասխանաբար:			

ԱՐՏԱՀԱՆՈՂԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ ներքոստորագրյալս, դարձերեսին նկարագրված ապրանքների արտահանողս,
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ որ ապրանքները բավարարում են կցված սերտիֆիկատի տրամադրման համար պահանջվող պայմանները.
ՆՇՈՒՄ ԵՄ հետեւյալ հանգամանքները, որոնք թույլ են տվել, որ այս ապրանքները բավարարեն վերոնշյալ պայմանները՝

.....
.....
.....
.....

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ հետեւյալ օժանդակ փաստաթղթերը ⁽¹⁾

.....
.....
.....
.....

ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ համապատասխան մարմինների հարցմամբ ներկայացնել բոլոր ապացույցները, որոնք այս մարմինները կարող են պահանջել կցված սերտիֆիկատի տրամադրման նպատակներով, եւ պարտավորվում եմ, անհրաժեշտության դեպքում, համաձայնել նշված մարմինների կողմից իրականացվող՝ իմ հաշիվների ցանկացած ստուգման եւ վերոնշյալ ապրանքների արտադրության գործընթացների ստուգման.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ տրամադրել այս ապրանքների համար կցված սերտիֆիկատը:

.....

(Վայր եւ ամսաթիվ)

.....

(Ստորագրություն)

(¹) Օրինակ՝ ներմուծման փաստաթղթեր, տեղափոխման սերտիֆիկատներ, հաշիվ-ապրանքագրեր, արտադրողի հայտարարագրեր եւ այլն՝ կապված արտադրության մեջ օգտագործվող արտադրանքի կամ նույն վիճակով վերարտահանված ապրանքների հետ: